Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 16-ի N 351-Լ որոշման

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

NN ը/կ	ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ
	Նախադպրոցական կրթություն **Նպատակ 1. Նախադպրոցական կրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում ու հզորացում**
1.	**1.1. Նախադպրոցական կրթության մասնագիտական կարողությունների շարունակական զարգացման մեխանիզմների ներդրում** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» (այսուհետ՝ ծրագիր) 81-րդ կետի 6-րդ ենթակետի «է» պարբերությամբ սահմանված դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է պատրաստել նախադպրոցական կրթության բովանդակության պահանջներին համապատասխան մասնագետներ, իրականացնել նախադպրոցական մանկավարժների, ինչպես նաև աշխատակազմի պարբերական վերապատրաստումներ, ինչպես նաև բարձրացնել նախադպրոցական հաստատությունների ղեկավարման արդյունավետությունն ու նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով ներդնել մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգ: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Նախադպրոցական կրթության որակը բարելավման կարիք ունի՝ հաշվի առնելով հարթ անցման ապահովումը տարրական դպրոց, էական խնդիր է ոլորտում որակյալ մասնագիտական կադրերի պակասը, վերջիններիս վարձատրության և մասնագիտական զարգացման արդիական համակարգերի բացակայությունը: Նախադպրոցական կրթության համակարգի լրջագույն խնդիրներից է մանկավարժական կադրերի պակասը հատկապես փոքր բնակավայրերում: Մանկավարժական կադրերի, ինչպես նաև սպասարկող անձնակազմի պակասը էական դժվարություններ է ստեղծում ՆԴՀ-ների համար: Միաժամանակ, մանկավարժների միջին տարիքն աճի միտում ունի (մանկավարժների 36.3%-ն ունի 16 տարի և ավելի աշխատանքային ստաժ), իսկ սկսնակ կադրերը չունեն բավարար գործնական հմտություններ և տեսական գիտելիքներ:

	1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները Նախադպրոցական մանկավարժների վերանայված պատրաստման վերապատրաստման կրթական ծրագրեր, դրանց փորձարկում և ներդրում՝ համապատասխանեցնելով նախադպրոցական կրթության արդիականացված բովանդակության պահանջներին: Նախադպրոցական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումների կազմակերպում՝ տարեկան աշխատակազմի շուրջ 20 տոկոսը, այդ թվում՝ մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների կիրառման ուղղությամբ: Նախադպրոցական հաստատություններում ծնողավարման դասընթացների պարբերական իրականացում՝ հաստատությունների կամ ոլորտում գործող կազմակերպությունների ներգրավմամբ: Նախադպրոցական հաստատությունների ղեկավարման իրավունքի նպատակով հավաստագրման մեխանիզմի գործարկում՝ մինչև 2026 թվականն ապահովելով բոլոր տնօրենների հավաստագրումը: Նախադպրոցական հաստատություններում մասնագիտական կադրերի ապահովում՝ մասնավորապես տրանսպորտային ծախսերի փոխհատուցման միջոցով: Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով: **2. Ակնկալվող արդյունքը.** Բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ, դպրոց ընդունվող բոլոր երեխաների համար ապահովված կլինի առնվազն մեկ տարի ընդգրկվածությունը՝ նախադպրոցական ծրագրերում, ինչպես նաև բոլոր խոշորացված համայնքներում կլինեն գործող մսուրի ծառայություններ:
	1.2. Նախադպրոցական կրթության բովանդակության և որակի բարելավում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 77-րդ կետի 1-ին ենթակետի և 81-րդ կետի 1-ին ենթակետի դրույթների պահանջներից: Գործընթացի նպատակն է մշակել և իրականացնել չափորոշչային պահանջներին համապատասխան ծրագրեր և ներդնել: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերջին տարիներին հատկապես ընդգծվում է հանրապետությունում ՆԴՀ-ների անբավարար քանակը, բայց նույնքան կարևոր է այդ կազմակերպություններում կրթական ծառայությունների որակի հարցը: 2021 թվականին Կառավարության հաստատած նախադպրոցական կրթության նոր չափորոշիչներին համապատասխան՝ պետք է վերանայվեն ու ներդրվեն երեխաների համար ճկուն, հարմարեցման ենթակա, տարիքին համապատասխան ծրագրեր: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է տարբեր տարիքային խմբերի երեխաների համար մշակված համապատասխան ուսումնամեթոդական նյութեր: Նախադպրոցական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակական վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները:

	2. Ակնկալվող արդյունքը Նախատեսվում է ապահովել հասանելի և մատչելի նախադպրոցական հաստատությունների ու կրթական ծրագրերի համընդհանուր ծածկույթ, ինչպես նաև դպրոց ընդունվող բոլոր երեխաներն առնվազն մեկ տարի ընդգրկված կլինեն նախադպրոցական ծրագրերում:
Նպատակ 2. Նախադպրոցական կրթության կառավարման և ֆինանսավորման ծախսարդյունավետության ապահովում՝ այդ թվում մասնավոր ոլորտի ծառայությունների զարգացման միջոցով	
2.	**2.1. Նախադպրոցական կրթության ոլորտում ֆինանսավորման նոր մոդելների գործարկում** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 82-րդ կետի 4-րդ ենթակետի «ժգ» պարբերությամբ սահմանված դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է համայնքային մանկապարտեզներում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմանների ապահովման, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության ֆինանսավորումը պետական բյուջեից: Նախատեսվում է նաև նախադպրոցական կրթության ծառայությունների զարգացած ցանցի ներդրում՝ մասնավորի հետ համագործակցությամբ: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Հանրապետության շուրջ 229 բնակավայրում նախադպրոցական կրթական որևէ ծառայություն դեռևս չի մատուցվում: Մի շարք գյուղական և սահմանամերձ բնակավայրերում ՆԴՀ-ները կա՛մ բացակայում են, կա՛մ էլ իրարից բավականին հեռու են, որն էլ անհնարին է դարձնում երեխաների ներգրավումը նախադպրոցական կրթության համակարգում: Իսկ քաղաքային համայնքներում (բնակավայրերում) ՆԴՀ-ների սահմանափակ քանակն ստեղծում է ընդունելության հերթեր, որոնք նույնպես սահմանափակում են նախադպրոցական կրթության հասանելիությունը: ՀՀ համայնքների ֆինանսական հնարավորությունները սահմանափակ են համապատասխան նախադպրոցական կրթական հաստատություն կառուցելու կամ գոյություն ունեցող հաստատությունն ամբողջապես վերանորոգելու համար, հետևապես անհրաժեշտություն է առաջանում ոլորտում այլընտրանքային լուծումներ գտնել և դրանք համայնքներում կիրառելի դարձնել՝ պահպանելով գործող նախադպրոցական կրթական չափորոշիչները: Այս նպատակով վերանայվել են սուբվենցիոն ծրագրերի պայմանները՝ մեծացնելով ՆԴՀ-ների կառուցման, հիմնանորոգման, վերակառուցման կամ նորոգման դեպքում Կառավարության մասնակցության մասնաբաժինը, հնարավորություն ընձեռելով ավելի շատ համայնքների դիմել նմանատիպ ծրագրերի համար: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Պետական բյուջեից տրամադրել ֆինանսավորում համայնքային մանկապարտեզներում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմանների, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության ապահովման նպատակով: Նախատեսել նաև մասնավորի հետ համագործակցությամբ նախադպրոցական կրթության ծառայությունների զարգացած ցանցի ներդրում: **2. Ակնկալվող արդյունքը** Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ծախսարդյունավետ մոդելների, մոդուլային մանկապարտեզների կառուցման և այլ միջոցներով նախադպրոցական ծառայությունների

	ապահովման միջոցով, առաջնահերթություն տալով գյուղական, սահմանամերձ, բարձրլեռնային բնակավայրերին և սոցիալապես խոցելի խմբերին, ակնկալվում է, որ բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ, և յուրաքանչյուր ընտանիք ի վիճակի կլինի օգտվել այդ ծառայություններից:
	2.2. Նախադպրոցական կրթության կառավարման արդյունավետության բարձրացման գործիքակազմի ներդրում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 7-րդ մասով սահմանված դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է նախադպրոցական ծառայությունների լիցենզավորման թափանցիկ և պարզ համակարգի ներդրումը, երեխաների փոքրաքանակ համակազմ ունեցող բնակավայրերում նախադպրոցական ծառայությունների ինտեգրումը կրթահամալիրների կառուցվածքում՝ միասնական կառավարմամբ, ինչպես նաև նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգի գործարկումը: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանի Հանրապետության համայնքների ֆինանսական հնարավորությունները սահմանափակ են համապատասխան նախադպրոցական կրթական հաստատություն կառուցելու կամ գոյություն ունեցող հաստատությունն ամբողջապես վերանորոգելու համար, հետևապես անհրաժեշտություն է առաջանում ոլորտում այլընտրանքային լուծումներ գտնել և դրանք համայնքներում կիրառելի դարձնել՝ պահպանելով գործող նախադպրոցական կրթական չափորոշիչները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նման դեպքերում հաստատությունը պետք է ընդլայնի իր գործառույթները՝ գործելով իբրև համայնքային կենտրոն՝ ապահովելով բնակավայրի մշակութային, մարզական, ժամանցային միջավայրերն ու ենթակառուցվածքները: Այս տրամաբանությամբ 2020 թվականից մեկնարկել են 21 մոդուլային դպրոցների կառուցման աշխատանքները: Բացի այդ, նման դեպքերում կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության նպատակով կարող են գործել կրթահամալիրներ, որտեղ, հանրակրթական ծրագրերից զատ, կարող են իրականացվել նաև նախադպրոցական կրթական ծրագրեր: **2. Ակնկալվող արդյունքը** Գործող նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգ, որի օգնությամբ կիրականացվի հաշվետվողական համակարգի գնահատում՝ հետագա բարելավման համար, ոլորտի հաստատությունների՝ համակարգի օգտագործման կարողությունների հզորացման ծրագրեր: Կգործի կրթահամալիրների ցանց, որոնք կիրականացնեն նախադպրոցականից մինչև մասնագիտական կրթություն:
Նպատակ 3. 0-5 տարեկան երեխաների բոլոր խմբերի համար նախադպրոցական ծառայությունների ծածկույթի ամբողջական ապահովում գյուղական և քաղաքային համայնքներում	
3.	**3.1. Նախադպրոցական ծառայությունների ամբողջական հասանելիության ապահովման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացում և ծառայությունների ներդրում** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը**

	Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 77-րդ կետի 1-ին ենթակետի և 86-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է՝ նախադպրոցական ծառայություններ չունեցող համայնքներում նախադպրոցական հաստատությունների, այդ թվում՝ այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրումը, նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների քարտեզագրումն ու ըստ քարտեզագրման արդյունքների հիմնանորոգում և վերակառուցում՝ ստեղծելով տարբեր կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջներին համապատասխանող և անվտանգ միջավայր: Ինչպես նաև նախադպրոցական հաստատություններում աղետների դիմակայունության և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու պայմանների ապահովումն ու կարողությունների զարգացումն է, ուսումնական գույքի, դիդակտիկ նյութերի, զարգացնող խաղերի շարունակական արդիականացման միջոցով: Կարևոր նպատակ է պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում 0-2 տարեկան երեխաների խմբերի ֆինանսավորումը՝ ապահովելով բոլոր խոշորացված համայնքներում մսուրի ծառայությունների հասանելիություն: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Մի շարք գյուղական և սահմանամերձ բնակավայրերում ՆԴՀ-ները կա՛մ բացակայում են, կա՛մ էլ իրարից բավականին հեռու են, որն էլ անհնարին է դարձնում երեխաների ներգրավումը նախադպրոցական կրթության համակարգում: Իսկ քաղաքային համայնքներում (բնակավայրերում) ՆԴՀ-ների սահմանափակ քանակն ստեղծում է ընդունելության հերթեր, որոնք նույնպես սահմանափակում են նախադպրոցական կրթության հասանելիությունը: Ուստի առաջիկա տարիներին առաջնահերթ է գյուղական համայնքներում նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնումը, ներառյալ՝ վաղ տարիքի զարգացման ծառայությունները: Սա հատկապես կարևոր է, քանի որ հետազոտությունները ցույց են տալիս, որ կրթության արդյունքի վրա առավել մեծ ազդեցություն նախադպրոցական ծառայությունն ունենում է երեք տարի և ավելի ընդգրկվածության պարագայում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է, որ հատկապես փոքրաքանակ կազմով համայնքներում և բնակավայրերում, որտեղ շահառուների թիվը փոքր է, և նախադպրոցական ծառայությունների ներդրման համար անհրաժեշտ է դիտարկել նաև դրանց ծախսարդյունավետությունը, կարող են գործել այլընտրանքային նախադպրոցական ծառայություններ, որոնք կարող են կազմակերպվել տարբեր ձևաչափերով, ինչպես՝ տնային մանկապարտեզ, շարժական ծառայություններ: Այլընտրանքային ծառայությունների ներդրումն սկսվել է 2021 թվականից: Պետությունը նախաձեռնել է նաև սոցիալական տարբեր խմբերի՝ նախադպրոցական ծառայություններում ընդգրկման աջակցության ծրագրեր, որոնց շրջանակներում փուլային տրամաբանությամբ կֆինանսավորվի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններ ունեցող, սոցիալապես անապահով և այլ խմբերի նախադպրոցական կրթությունը: Սկսած 2023 թվականից՝ այս ծրագրի շրջանակներում կֆինանսավորվի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 2000 երեխայի կրթությունը: Ուստի կքարտեզագրվեն նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանները, ըստ քարտեզագրման արդյունքների կհիմնանորոգվեն և կվերակառուցվեն՝ ստեղծելով տարբեր կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջներին համապատասխանող և անվտանգ միջավայր:

	Նախադպրոցական հաստատություններում կապահովվի զարգացնող միջավայրը՝ ուսումնական գույքի, դիդակտիկ նյութերի, զարգացնող խաղերի շարունակական արդիականացման միջոցով: Կիրականացվի պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում 0-2 տարեկան երեխաների խմբերի ֆինանսավորումը՝ ապահովելով բոլոր խոշորացված համայնքներում մսուրի ծառայությունների հասանելիություն: **2. Ակնկալվող արդյունքը** Ակնկալվում է ունենալ հասանելի և մատչելի նախադպրոցական ուսումնական հաստատությունների ու կրթական ծրագրերի համընդհանուր ծածկույթի ապահովում:
Հանրակրթություն **Նպատակ 1. Հանրակրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում և հզորացում, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացում**	
1.	**1.1. Հանրակրթական հիմնական ծրագրերի և դասագրքերի որակի բարելավում և ներդրում դպրոցներում** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 81-րդ կետի 7-րդ ենթակետի «ա» պարբերությունով սահմանված դրույթների պահանջներից: Գործողության նպատակն է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակաբար վերանայումը՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Անհետաձգելի խնդիր է նյութատեխնիկական հագեցվածության, այդ թվում՝ ուսումնական նյութերի համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, որոնք ուղղակի ազդեցություն ունեն սովորողների կրթության արդյունքի վրա: Խոսքը վերաբերում է ինչպես դպրոցում առկա ենթակառուցվածքներին (կոմունալ հարմարություններին, կապի առկայությանը և այլն), այնպես էլ գույքային հագեցվածությանը, անհրաժեշտ պիտույքների և միջոցների հասանելիությանը: Այդ ազդեցությունը հատկապես զգալի է բնագիտական առարկաների դեպքում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Սահմանվել են ուսումնական նյութերի, այդ թվում՝ դասագրքերի, մշակման գործընթացի վերաբերյալ օրենսդրական հիմքերը՝ ապահովելով ճկունություն և մրցակցություն, բարելավելով հեղինակային իրավունքի դաշտը: Կվերահրատարակվեն դասագրքերը՝ վերանայված առարկայական չափորոշիչներին, ծրագրերին և սահմանված ստանդարտներին համապատասխան: **2. Ակնկալվող արդյունքը** Հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան վերանայված բովանդակություն և վերահրատարակված դասագրքեր:
	1.2. Ուսուցիչների մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված մեխանիզմների ներդրում, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացման գործիքակազմի մշակում և իրականացում

1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը
Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 7-րդ կետի, 81-րդ կետի 6-րդ ենթակետի «է» և «ը» պարբերությունների դրույթներով սահմանված պահանջներից: Գործընթացի նպատակն է խորքային բարելավել մանկավարժական կրթությունը և ուսուցչի մասնագիտությունը երիտասարդների համար դարձնել նախընտրելի:

1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները
Հայաստանում ամենաբարձր կրթական արդյունքը գրանցում են 10-20 տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչները՝ արձանագրելով 30 միավորի տարբերություն ավելի փոքր աշխատանքային փորձառություն ունեցող ուսուցիչների նկատմամբ: Այս խմբի ուսուցիչների սաների գրանցած արդյունքն ավելի բարձր է, քան քսան տարուց ավելի ստաժ ունեցող ուսուցիչներինը: Ամենացածր արդյունքը գրանցում են մինչև հինգ տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչները, որը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է տարբերակված ծրագրեր ունենալ տարբեր աշխատանքային փորձառություն ունեցող ուսուցիչների համար, ինչպես, օրինակ, հետևողական աշխատանք տանել սկսնակ ուսուցիչների մասնագիտական զարգացման ուղղությամբ: Այն խոսում է նաև մանկավարժական կրթության խնդիրների մասին, այդ թվում՝ մանկավարժական պրակտիկայի անբավարար գործիքակազմի, որի հետևանքով մանկավարժական պրակտիկան ըստ էության տեղափոխվում է աշխատանքային առաջին տարիների գործունեության դաշտ: Այս առումով հատկապես մտահոգիչ է այն հանգամանքը, որ Հայաստանում ուսուցիչների գրեթե կեսը (46%-ը) 50 տարեկանից բարձր տարիքի է, որը նշանակում է՝ Հայաստանը ստիպված է լինելու հաջորդ տասնամյակում ուսուցչական համակազմի յուրաքանչյուր երկու անդամից մեկին փոխարինել նորով:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները
Կընդլայնվեն ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունները՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական ստանդարտների հետ: Կվերանայվեն ուսուցչի դրույքաչափը և աշխատանքային նկարագիրը՝ նվազեցնելով վերջիններիս վարչական աշխատանքի ծավալը և հնարավորություն ստեղծել առավելագույնս մանկավարժադաստիարակչական գործունեությամբ զբաղվելու համար: Կիրականացվեն հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումներ, այդ թվում՝ մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ: Կներդրվեն գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների և ԲՏՃՄ առարկաների ուսուցիչների հավելյալ խրախուսման մեխանիզմներ: Կներդրվեն նաև մանկավարժի որակավորման ճկուն մեխանիզմներ, այդ թվում՝ երկակի որակավորմամբ մանկավարժների պատրաստմամբ: Կվերանայվեն ուսուցիչների նպատակային ուսուցման, ինչպես նաև հեռավոր համայնքներ գործուղման ծրագրերն ու ընթացակարգերը՝ սահմանելով առավել իրատեսական չափորոշիչներ:

2. Ակնկալվող արդյունքը
Մանկավարժի, դասախոսի, դասավանդողի գործունեությունը կլինի պատշաճ վարձատրվող և հասարակական հեղինակություն վայելող մասնագիտություն:

Նպատակ 2. Հանրակրթական ծրագրերի բազմազանության և հասանելիության ապահովում՝ ծառայությունների հասցեական տեղաբաշխման և տրամադրման միջոցով

2.	**2.1. Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների՝ կրթության համակարգում արդյունավետ ընդգրկման գործիքակազմի ներդրում** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 81-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության դրույթներով սահմանված պահանջներից: Գործընթացի նպատակն է բոլոր երեխաների կրթության իրավունքի ապահովումը: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Վերջին տարիներին հանրակրթության ոլորտում համախառն ընդգրկվածության միջին ցուցանիշը շուրջ 90% է: Դպրոց չհաճախելու հիմնական պատճառներն են հաշմանդամության վերաբերյալ հանրային կարծրատիպային ընկալումները, ծայրահեղ աղքատությունը, մանկական աշխատանքը, էթնիկ պատկանելությունը (երբեմն նաև սեռային դրսևորմամբ) և փախստականի կարգավիճակը կամ տեղահանված լինելը: Սովորողների ընդգրկվածության ցուցանիշը զգալիորեն ցածր է հատկապես միջնակարգ կրթության երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում, որտեղ ցուցանիշը 2019 թվականին կազմել է 59.5%: Հաշվի առնելով, որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո համապատասխան տարիքի բնակչության ընդամենը 14.9%-ն է ուսումը շարունակել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, հստակ կարելի է արձանագրել, որ հիմնական դպրոցի շրջանավարտների զգալի մասը միջնակարգ կրթության երրորդ մակարդակում չի ընդգրկվում: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների հաշվառման համակարգի արդյունավետ գործարկում: **2. Ակնկալվող արդյունքը** Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից**:**
	2.2. Հանրակրթական հաստատություններում որակյալ ներառական կրթության ապահովման մեխանիզմների ներդրում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 77-րդ կետի 1-ին և 81-րդ կետի 1-ին ենթակետերի դրույթներով սահմանված պահանջներից: Գործընթացի նպատակը՝ համընդհանուր ներառական սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծում, որը յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման և անձնային առանձնահատկություններից բխող և քաղաքացիական համագործակցությանը նպաստող որակյալ ու արդյունավետ կրթական ծառայությունները Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Չնայած Հայաստանի Հանրապետությունը 2014 թվականին «Հանրակրթության մասին» օրենքի փոփոխությունների համաձայն անցում է կատարել համընդհանուր ներառական կրթության համակարգին, սակայն այս ուղղությամբ դեռևս շատ անելիքներ կան: Մասնավորապես՝ հանրակրթական դպրոցների կարողությունները դեռևս բավարար չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման

	մատչելի միջավայր և խելամիտ հարմարեցումներ ապահովելու, համապատասխան ծառայություններ տրամադրելու առումով: Այսօր դպրոցների շենքերին ներկայացվող պահանջներին գումարվել են նաև ներառականության և աղետների ռիսկերի կառավարման պահանջները: Անհետաձգելի խնդիրներից է դպրոցների շենքերի ու նյութատեխնիկական հագեցվածության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, որոնք ուղղակի ազդեցություն ունեն սովորողների կրթության արդյունքի վրա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներառականության ապահովումը կիրականացվի ֆիզիկական և ուսումնական միջավայրերի հարմարեցման միջոցով: Հանրակրթական ուսումնական հաստատություններում կապահովվի սոցիալ-հոգեբանական ծառայությունների հասանելիությունը՝ բռնությունից զերծ միջավայրի ձևավորման և սովորողների սոցիալ-հոգեբանական աջակցության նպատակով: Հանրակրթական ուսումնական հաստատություններին կտրամադրվեն որակյալ խորհրդատվություն և աջակցություն՝ ռեսուրս-կենտրոնների և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: **2. Ակնկալվող արդյունքը** Բոլոր դպրոցները կունենան պատշաճ կահավորված և արդիական սարքավորումներով հագեցված, սանիտարահիգիենիկ, անվտանգային ստանդարտները բավարարող և համընդհանուր մատչելի շենքեր, որոնք կնպաստեն ապահովելու հավասարապես հասանելի ու որակյալ կրթություն: Առկա կլինի ներառական սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայր՝ բոլոր սովորողների համար:
	2.3. Ուսուցման այլընտրանքային եղանակների միջոցով կրթական ծառայությունների հասանելիության և որակի ապահովում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 81-րդ կետի 1-ին ենթակետի «ե» և 7-րդ ենթակետի «բ» պարբերությունների դրույթներով սահմանված պահանջներից: Նպատակն է ներդնել հեռավար կրթական ծառայություններ, այդ թվում՝ մշակել առցանց դասընթացներ բոլոր մակարդակների սովորողների համար, հատկապես գյուղական և սահմանամերձ համայնքների: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Առանձին խնդիր է դպրոցների ոչ բավարար հագեցվածությունը համակարգչային սարքավորումներով: Սովորող/համակարգիչ հարաբերակցությունը երկրի դպրոցներում 16.8% է: Դպրոցների ընդհանուր քանակի մեջ առավել շատ են այն դպրոցները, որոնք ունեն 10 համակարգիչ: Աշխատող համակարգիչների ամենահաճախ հանդիպող ցուցանիշը 3-ն է: Դպրոցների միայն 25%-ն ունի 13 աշխատող համակարգչից ավելի: Ինչ վերաբերում է դպրոցների՝ լաբորատոր սարքավորումներով հագեցվածությանը, ապա նման ծրագիր իրականացվել է միայն առանձին գործող ավագ դպրոցների մասով. 2019-2020 թվականներին դպրոցներին տրամադրվել են բնագիտական առարկաների լաբորատորիաներ, հանրակրթության նոր չափորոշիչների փորձարկման նպատակով «ԵՄ-ն հանուն կրթական նորարարության» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում լաբորատոր սարքավորումներ են տրամադրվել նաև Տավուշի մարզի բոլոր դպրոցներին: Սակայն ակնհայտ է, որ առաջնահերթություն է բոլոր դպրոցներում լաբորատոր ենթակառուցվածքների ստեղծումը, որը

	կարող է լավ նախադրյալ լինել բնագիտական ուղղությամբ կրթության որակի և արդյունավետության բարելավման համար: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրում սովորողների այն խմբերի և դեպքերի համար, երբ առկա ուսուցումը հնարավոր չէ, ինչպես նաև մուլտիմեդիա ձևաչափով հայրենագիտական ճանաչողական և տեղեկատվական նյութերի արտադրություն և տարածում: **2. Ակնկալվող արդյունքը** Կունենանք հեռավար կրթական ծառայություններ, էլեկտրոնային բաց պաշարներ, առցանց դասընթացներ, որոնք ներդրված կլինեն բոլորի համար: Հեռավար դասավանդման վերաբերյալ տարեկան կվերապատրաստվի ուսուցիչների 20%-ը:
	2.4. Արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների ցանցի զարգացում և հասանելիության ապահովում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 81-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության և 83-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթների պահանջներից: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Հանրակրթության մակարդակում հատկապես կարևորվում է արտադպրոցական կրթությունը, որն ինստիտուցիոնալ առումով Հայաստանում շարունակում է գործել խորհրդային համակարգից ժառանգած իներցիայով, իսկ ոչ ինստիտուցիոնալ առումով՝ որևէ կերպ չկանոնակարգված դաշտում, որտեղ խնդրահարույց են տարբեր կրթական ծառայությունների որակը և համապատասխանությունը հայտարարվող նպատակին ու բովանդակությանը: Արվեստի, գեղարվեստի, երաժշտական և սպորտային դպրոցների, մանկապատանեկան կենտրոնների համար չկան գործունեության միասնական չափանիշներ և ստանդարտներ, անհրաժեշտ կարգավորումներ: Համակարգի հաստատությունների կազմակերպական-իրավական ձևերը, ենթակայության սկզբունքները բավարար հիմնավորված չեն: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կզարգացվեն սովորողների նախասիրությունները և կարողությունները խթանող արտադասարանական և արտադպրոցական ծառայությունները ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցի և այլ կենտրոնների համագործակցությամբ: Ինչպես նաև վերջիններիս միջոցով ավագ դասարաններում կրեդիտային համակարգի ներդրման հնարավորություն կլինի: **2. Ակնկալվող արդյունքը** Սովորողների մոտ իրենց նախասիրություններին համապատասխան կարողությունների զարգացում՝ արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների միջոցով:
	2.5. Արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի վարձատրության բարձրացում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 46-րդ կետի, ինչպես նաև 86–րդ կետի 6-րդ ենթակետի դրույթների պահանջներից: Նպատակն է՝ ուսումնական, այդ թվում՝ արտա-

	դպրոցական հաստատությունները համալրել որակավորված և սահմանված ստանդարտներին համապատասխան ատեստավորված մանկավարժներով, որոնք կստանան արժանապատիվ վարձատրություն: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Մանկավարժները ցածր աշխատավարձի պատճառով մոտիվացված չեն զբաղվել դասավանդումով, ինչը էապես բարդացնում է որակյալ մասնագետների ներգրավումը ուսումնական հաստատություններում: Բազմաթիվ են դեպքերը, երբ հաստատությունները չեն կարողանում ներգրավել գործող որակյալ մասնագետներին: Լրջագույն խնդիր է ոլորտում վարձատրության չափը, որը նույնպես էական խոչընդոտ է որակյալ մասնագետներին ներգրավելու համար, ուստի անհրաժեշտ է ներդնել մասնագիտական զարգացման և վարձատրության խրախուսման փոխկապակցված մեխանիզմ այս խնդիրները հասցեագրելու համար: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կմշակվեն արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի խրախուսման մեխանիզմներ՝ կամավոր ատեստավորման միջոցով: **2. Ակնկալվող արդյունքը** Կունենանք որակյալ և մոտիվացված մանկավարժներ:
	2.6. Հանրակրթական հաստատություններում սովորողների սնվելու հնարավորությունների ընդլայնում և շարունակականության ապահովում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 81-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» և 3-րդ ենթակետի «գ» պարբերությունների դրույթների պահանջներից: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Խնդիր է դպրոցական ճաշարանների ոչ բավարար վիճակն ու առկայությունը: Մինչդեռ դպրոցական սննդի պատշաճ կազմակերպումը կարող է նպաստել նաև սովորողների առողջ ապրելակերպի ձևավորմանը: Էական է նաև դպրոցական սննդի ծրագրի ազդեցությունը սովորողների կրթական արդյունքների վրա, որն անհրաժեշտ է դարձնում ՀՀ մարզերի տարրական դասարաններում գործող դպրոցական սննդի ծրագրի ընդլայնումը՝ ապահովելով համապատասխան ենթակառուցվածքները, ներդնելով կրթական ծրագրի հետ փոխկապակցվածության մեխանիզմը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների համար կապահովվեն առողջ սնվելու հնարավորությունները: **2. Ակնկալվող արդյունքը** «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրից օգտվող շահառուների ցանկի ընդլայնում:
Նպատակ 3. Հանրակրթական ուսումնական հաստատություններում անվտանգ, հագեցած և արդիական սովորելու միջավայրի և ռեսուրսների ապահովում	
3.	**3.1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների անվտանգ և արդյունավետ գործունեության անհրաժեշտ պայմանների ապահովում**

	1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 81-րդ կետի 1-ին ենթակետի «ա», ինչպես նաև 2-րդ ենթակետի «ա» պարբերությունների դրույթների պահանջներից: Նպատակը կրթական միջավայրի ամբողջական փոխակերպումն է, դարձնելով այն կրթվելու և ստեղծագործելու համար ապահով ու անվտանգ միջավայր, որտեղ ամեն առանձին բաղադրիչ կապված է մյուսի հետ՝ մարդու կարողությունների լիարժեք և ստեղծարար զարգացումն ապահովելու նպատակով: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Անհետաձգելի խնդիրներից է դպրոցների շենքերի ու նյութատեխնիկական հագեցվածության համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, որոնք ուղղակի ազդեցություն ունեն սովորողների կրթության արդյունքի վրա: Խոսքը վերաբերում է ինչպես դպրոցում առկա ենթակառուցվածքներին (կոմունալ հարմարություններին, կապի առկայությանը և այլն), այնպես էլ գույքային հագեցվածությանը, անհրաժեշտ պիտույքների և միջոցների հասանելիությանը: Այդ ազդեցությունը հատկապես զգալի է բնագիտական առարկաների դեպքում: Այն դպրոցների պարագայում, որոնց համար սովորողները նշել են, որ կան ենթակառուցվածքի հետ կապված խնդիրներ, նման խնդիրներ չարձանագրող դպրոցների համեմատ՝ կրթական արդյունքի տեսանկյունից գրանցվում է առնվազն տասը միավորով տարբերություն: 455 դպրոց կամ դպրոցների 31.7%-ը կարիք ունի հիմնանորոգման, ևս 383 դպրոցում կամ դպրոցների 26.7%-ում ընթացիկ նորոգման աշխատանքների կարիք կա: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Ընթանում են հանրակրթական ուսումնական հաստատությունների նպատակային քարտեզագրումը՝ ներառյալ հաստատությունների տեղաբաշխումը և շենքային պայմանների գնահատումը՝ հիմնվելով Կապան խոշորացված համայնքի փորձնական ծրագրի արդյունքների վրա: Գնահատված արդյունքների հիման վրա նախատեսվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, այդ թվում՝ սեյսմիկ անվտանգության ապահովում, փոքրաքանակ աշակերտական համակազմ ունեցող բնակավայրերում մոդուլային դպրոցական շենքերի կառուցում, ըստ անհրաժեշտության՝ հիմնանորոգման, վերակառուցման և վերանորոգման այլ աշխատանքների իրականացում, ինչպես նաև զուգահեռ նոր չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում: Նույն տրամաբանությամբ առաջնորդվելով՝ նախատեսվում է նաև հիմնել մասնագիտացված արվեստի և սպայական կրթության ավագ դպրոցներ: **2. Ակնկալվող արդյունքը** Բոլոր դպրոցները կունենան պատշաճ կահավորված և արդիական սարքավորումներով հագեցված, սանիտարահիգիենիկ, անվտանգային ստանդարտները բավարարող և համընդհանուր մատչելի շենքեր:
Նպատակ 4. Հանրակրթական հաստատությունների ծախսարդյունավետ կառավարման և ֆինանսավորման մոդելների ներդրում	
4.	**4.1. Հանրակրթական հաստատությունների կառավարման նոր մոդելի ներդրում** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը**

	Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 82-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության դրույթների պահանջներից: Նպատակը արդյունավետ կառավարման, հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների ապահովումն է: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Ոլորտի խնդիրներից է արդյունավետ կառավարման և հաշվետվողականության ու թափանցիկության մեխանիզմների կիրառությունը: Կա կառավարչական կարողությունների պակաս՝ հատկապես ռազմավարական պլանավորման և ծրագրերի կառավարման ոլորտներում: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների և գործառույթների վերանայման ու արդյունավետ վերաբաշխման կարիք կա: Վերանայման կարիք ունի նաև խորհուրդների ձևավորման կարգը: Մասնակցայնությունը և հաշվետվողականությունը ուսումնական հաստատությունների կառավարման համակարգում ձևական բնույթ են կրում, այդ թվում՝ ծնողական խորհուրդների մասնակցությունը: Անհրաժեշտ է մշակել նաև ծնողներին կրթական գործընթացում ներգրավելու նոր ու արդյունավետ մեխանիզմներ, որոնք դպրոցում կարող են էապես նպաստել դաստիարակության գործառույթի պատշաճ ու ներդաշնակ իրականացմանը, սովորելու արդյունավետության բարձրացմանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում են հանրակրթական ուսումնական հաստատությունների վարչատնտեսական և բովանդակային կառավարման գործառույթների տարաբաժանում ու առանձնացված իրականացում, հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների խոշորացում, հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունների պատվիրակում տեղական ինքնակառավարման մարմիններին: **2. Ակնկալվող արդյունքը** Գործող կառավարման արդյունավետ համակարգ՝ ապահովելով մասնակցայնություն և հաշվետվողականություն:
	4.2. Հանրակրթական հաստատությունների ֆինանսավորման նոր մոդելի ներդրում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 80-րդ և 85-րդ կետերով ամրագրված դրույթների պահանջներից, որի նպատակը ֆինանսավորման նպատակայնության բարձրացումն է: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Կրթության ոլորտի ցածր արդյունավետության պատճառներից է ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը, որն անդրադառնում է ինչպես արդյունքի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների բացակայության, այնպես էլ ոլորտի հաստատությունների չկանոնակարգված տեղաբաշխման ու կառուցվածքի վրա: Ֆինանսական կառավարման մեխանիզմները հնացած են: Թերհամալրված դպրոցները ոչ միայն տարածքային անհամամասնություններ են առաջացնում, այլև ֆինանսավորման բևեռացում: Ինչպես նաև խիստ թերհամալրված դպրոցներում մեկ սովորողի հաշվով ծախսը մի քանի անգամ գերազանցում է լրիվ համալրված դպրոցների նույն ցուցանիշը: Ներկայում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում են ուսումնական հաստատությունների ընթացիկ բնույթի վարչական և

	զուտ կրթական ծախսերը, ընդ որում՝ մեծ մասնաբաժինը աշխատավարձի գծով հատկացումներն են: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Դպրոցների ֆինանսավորման կարգի փոփոխությունը, որով անցում է կատարվել դասարանների թվով ֆինանսավորմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նպատակային արդյունավետ ֆինանսավորմանը, առկա խնդիրների լուծման ճանապարհ կհանդիսանա: Ինչպես նաև դպրոցների լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմի ներդրումը բարձր կատարողական ցուցանիշներ ունեցող դպրոցների համար՝ խրախուսման, իսկ ցածր կատարողական ցուցանիշներ ունեցող դպրոցների համար՝ զարգացման մեծ ազդեցություն կարող է ունենալ: **2. Ակնկալվող արդյունքը** Ներդրված ծախսարդյունավետ ֆինանսավորման մոդել, որի արդյունքում ծախսի նպատակայնությունը նպաստում է կրթության որակի ապահովմանը:
Նախնական և միջին մասնագիտական կրթություն **Նպատակ 1. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (այսուհետ՝ ՆՄՄԿ) բովանդակության և մասնագիտական ներուժի արդիականացում ու հզորացում՝ աշխատաշուկայի և ժամանակակից մասնագիտական պահանջներին համահունչ**	
1.	**1.1. Նախնական և միջին մասնագիտական կրթության բովանդակության բարելավում և որակի ապահովում** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 81-րդ կետով ամրագրված դրույթներից: Գործընթացն ուղղված է ՆՄՄԿ բովանդակության բարելավմանը, մասնագիտական ներուժի արդիականացմանն ու հզորացմանը, աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համահունչ մասնագիտությունների ապահովմանը, մասնագիտական կրթության և ուսուցման (այսուհետ՝ ՄԿՈՒ) ոլորտի զբաղունակության բարելավմանը: ՆՄՄԿ-ն նշանակալի ազդեցություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Ըստ այդմ՝ սույն ծրագրով նախատեսված միջոցառումներն անհրաժեշտ նախապայման են ՄԿՈՒ ոլորտում առկա մի շարք խնդիրներ լուծելու համար, այդ թվում՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի մասնագիտական զարգացման, գործատուների ներգրավման և սոցիալական գործընկերության ընդլայնման, եվրոպական կրթական տարածքին ինտեգրման և որակավորումների փոխճանաչմանը նպաստելու առումով: ՄԿՈՒ համակարգի զարգացման ընթացքում գերակա միտում ունի աշխատանքի վրա հիմնված կրթության ներդրման և կիրառման հնարավորությունների ընդլայնումը, ինչը թույլ կտա մի կողմից գործատուներին ներգրավված լինել կրթական գործընթացներում, ուսումնական հաստատությունների հետ համատեղ մասնակցել նորարարական նախագծերին, իսկ մյուս կողմից՝ կնպաստի սովորողների մոտ տեսական և գործնական համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորմանը, զբաղվածության խթանմանը: Առանցքային կարևորություն ունի ոլորտում առկա մասնագիտությունների վերանայումը, նոր տեխնոլոգիաներով պայմանավորված տնտեսության զարգացման համար պահանջվող և նորարար մասնագիտությունների ներմուծումը և գոյություն ունեցող ու ուսուցանվող մասնագիտությունների և որակավորումների վերանայումն ու արդիականացումը: Անհրաժեշտ է նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն

	իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության տեղերի վերաբաշխման իրականացումը՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության, ՀՀ մարզերի զարգացման ուղղությունները, առանձնահատկությունները, ուսանողների թվի համամասնությունը, նախկին տարիներին հատկացված տեղերի և փաստացի ընդունելության արդյունքների վերլուծությունը, անհրաժեշտ համապատասխան մասնագետների քանակը, տրամադրվող կրթական ծրագրերի բազմազանությունը: Այս համատեքստում առանցքային դեր ունի նաև ՆՄՄԿ մասնագիտությունների և որակավորումների պետական կրթական չափորոշիչների բովանդակային բարելավումը: Մասնագիտական կրթության որակի առումով ամենաակնառու խնդիրն է մնում մասնագիտական հմտությունների անհամապատասխանությունն աշխատաշուկայի պահանջարկին, ինչպես նաև կրթություն և աշխատաշուկա, սոցիալական գործընկերներ թույլ կապը: Այս խնդիրը լուծելու լավագույն մոտեցումը (հաշվի առնելով նաև միջազգային փորձի ուսումնասիրությունները)՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցման կամ դուալ ուսուցման նեդրումն է ՆՄՄԿ ոլորտում: Հաշվի առնելով տնտեսության մեջ և աշխատաշուկայում տեղի ունեցող արագ փոփոխությունները և զարգացումները՝ անհրաժեշտ է մշակել և գործարկել մասնագետների պատրաստման, արագ և ճկուն որակավորում ապահովող առավել ճկուն մեխանիզմներ, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության արդյունքում միկրոորակավորումների ճանաչման միջոցով: ՆՄՄԿ ոլորտում ուսուցանվող մասնագիտությունների և որակավորումների միջոցով տրամադրվող հմտությունների ու կարողությունների՝ արդի տնտեսության և աշխատաշուկայի պահանջարկին համապատասխանության ապահովման առումով, կարևոր նշանակություն ունի լիցենզավորման, ներքին և արտաքին որակի ապահովման մեխանիզմների բարելավումն ու դրանց գործարկումը: Կարևորելով ՆՄՄԿ դերը սոցիալ-տնտեսական զարգացման, աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան համալրման գործում՝ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի «4.3. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» բաժնում նույնպես առանձնացվել են գործունեության մի շարք թիրախային ուղղություններ, այդ թվում՝ - կրթական ծրագրերի արդիականացում, նոր մասնագիտությունների ներդրում, հաստատությունների և դրանցում իրականացվող ծրագրերի տեղաբաշխման ռացիոնալացում, ընդունելության տեղերի բաշխման նոր մեթոդաբանության ներդրում՝ համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղություններին, մարզերի զարգացման առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջարկին, - տարեկան առնվազն 2 ուսումնական հաստատությունում աշխատանքի վրա հիմնված և դուալ ուսուցման ներդրում ու ընդլայնում՝ մասնավոր հատվածի և գործարար համայնքի ակտիվ ներգրավման միջոցով, որը կնպաստի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան որակյալ աշխատուժի պատրաստմանը: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Մասնագիտական կրթության պարագայում մեծագույն խնդիր է աշխատաշուկայի ներկա և կանխատեսվող պահանջներին համապատասխան կադրերի պատրաստումը: Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում 2020-2021 ուսումնական տարում հանրապետությունում գործել է նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 48 պետական ուսումնական հաստատություն, որից 23-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և 25-ը՝ միջին մասնագիտական: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների թիվը եղել է 6780,

	որից 23.3%-ը՝ կին: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 94.9%-ը, վճարովի համակարգում՝ 5.1%-ը: Միջին մասնագիտական կրթական ծրագրերով գործել է 95 պետական և ոչ պետական ուսումնական հաստատություն, որտեղ 2020–2021 ուսումնական տարում ընդունվել է 10 461 (կանայք՝ 50.3%), սովորել՝ 28 399 (կանայք՝ 50.9%), ավարտել՝ 6565 (կանայք՝ 57.7%) մարդ: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշներն են՝ միջին մասնագիտական ծրագրերով սովորողները՝ 13.9%, արհեստագործական ծրագրերով սովորողները՝ 6.2%, որը չի կարող բավարար համարվել այն դեպքում, երբ իրական աշխատաշուկայի 70%-ը և ավելին կարիք ունի արհեստագործական և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների: Աշխատաշուկայի վերլուծությունները ցույց են տալիս, որ արհեստագործական կրթություն պահանջող շատ աշխատանքներում զբաղված են բարձրագույն կրթությամբ անձինք: Կրթության մատչելիությունը, որակը և արդյունավետությունը մնում են ՄԿՈՒ համակարգի հիմնական մարտահրավերները: Մատչելիության առումով խնդիր կա գործող ՄԿՈՒ հաստատությունների և դրանց կողմից իրականացվող մասնագիտությունների օպտիմալ բաշխման հարցում: Կան դեպքեր, երբ նույն համայնքում գործող մի քանի մասնագիտական ուսումնական հաստատություններ իրականացնում են նույն մասնագիտությամբ կրթական ծրագրեր՝ չունենալով վերլուծված կանխատեսելի աշխատաշուկա, ժամանակակից կարիքները բավարարող նյութատեխնիկական բազա և մասնագիտական ռեսուրսներ, լինելով գրեթե թերբեռնված՝ տվյալ համայնքի համար այլ կարևոր ուղղություններով մասնագիտական ուսուցում չեն իրականացնում: Հաճախ են դեպքերը, երբ հաստատությունն իրականացնում է բազմաթիվ մասնագիտական կրթական ծրագրեր փոքրաքանակ ուսանողական համակազմի համար՝ ակնհայտ դարձնելով որակյալ կրթության անհնարինությունը: Անհրաժեշտ է դիտարկել թե՛ հաստատությունների, թե՛ մասնագիտությունների լավագույն տարբերակով տեղաբաշխման հարցերը: 2015 թվականին վերանայված մասնագիտական կրթության և ուսուցման մասնագիտությունների ցանկերը ներառում են արհեստագործական կրթության 113 մասնագիտություն՝ 283 որակավորմամբ, որից ներկայում ուսուցանվում է շուրջ 55 մասնագիտություն, միջին մասնագիտական կրթության 247 մասնագիտություն՝ շուրջ 252 որակավորմամբ, որից ներկայում ուսուցանվում է շուրջ 100 մասնագիտություն: Այսպիսով, մասնագիտությունների ցանկում ընդգրկված մասնագիտությունների զգալի մասով ուսումնառության գործընթաց չի իրականացվում, բացակայում են շատ մասնագիտությունների կրթական չափորոշիչները: Մասնագիտությունների ցանկը կարիք ունի էական վերանայման և տնտեսության զարգացման արդի միտումներին համապատասխանեցման: Նույնիսկ այն մասնագիտությունները, որոնք շարունակում են մնալ արդիական, պետք է վերանայվեն կրթական չափորոշիչների և աշխատաշուկայի կարիքներին համապատասխանելու տեսանկյունից: ՄԿՈՒ ոլորտում միջազգային համագործակցության շրջանակում, պարբերաբար ներդրվում են մարդկային կապիտալի զարգացմանը միտված ու մրցունակ քաղաքացի ձևավորող կրթական ծրագրեր: Այս առումով, ՄԿՈՒ ոլորտում առաջընթաց է նկատվում առանձին մասնագիտությունների գծով դուալ մոտեցմամբ կրթական ծրագրեր իրականացնելու հարցում: Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան ՄԿՈՒ ոլորտի մրցունակ կադրեր պատրաստելու նպատակով՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության հետ (GIZ) համագործակցության շրջանակներում դեռևս 2017 թ. մշակվել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կազմակերպման մոդելը, որը ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թ. սեպտեմբերի 5-ի N 1026-Ա/2 հրամանի համաձայն՝ փորձարարական

	կարգով ներդրվել էր 4 մասնագիտական ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ ՄՈՒՀ), իսկ ապա՝ ընդհանուր առմամբ 13 ՄՈՒՀ-ում՝ 15 կրթական ծրագրով (տեղեկատվական տեխնոլոգիա, տուրիզմ, գինեգործություն, տրանսպորտ և լոգիստիկա, ճշգրիտ ճարտարագիտություն ոլորտներում): Մասնագիտական կրթության որակի առումով ամենաակնառու խնդիրն է մնում մասնագիտական հմտությունների անհամապատասխանությունն աշխատաշուկայի պահանջարկին, ինչպես նաև կրթություն և աշխատաշուկա, սոցիալական գործընկերներ թույլ կապը: Հայաստանում մասնագիտական կրթության ոլորտը կանոնակարգող իրավական ակտերում բացակայում է «Աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն» (այսուհետ՝ ԱՀՈՒ) եզրույթի՝ միջազգայնորեն ընդունված որևէ սահմանում: Աշխատանքի վայրում ուսումնառության կազմակերպման հիշատակումը վերաբերում է միայն ուսանողների արտադրական պրակտիկային, որը ԱՀՈՒ առկա միակ ձևն է Հայաստանի ՄԿՈՒ ոլորտում: ԱՀՈՒ վերաբերյալ կանոնակարգումներ չկան նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում, որտեղ մասնավորապես բացակայում են աշխատանքի վայրում սովորողի կարգավիճակի և ուսուցանող ձեռնարկություններում ուսումնառության կազմակերպմանը վերաբերող պայմանների սահմանումները և այլն: ՄԿՈՒ ոլորտում առկա խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տվել, հատկապես աշխատանքի վրա հիմնված ուսուցման ներդրման համատեքստում, որ դրանց արմատական լուծումը անհնարին է առանց առանցքային և համապարփակ օրենսդրական փոփոխությունների: Կարևորագույն խնդիր է ՄԿՈՒ ոլորտում լիցենզավորման, որակի ապահովման ներքին համակարգերի և հավատարմագրման արդյունավետ գործընթացի իրականացումը՝ ապահովելով միասնական ստանդարտների ու չափանիշների ներդրումը համակարգում: Ոլորտում կրթության որակի բարձրացմանը էապես կարող է նպաստել նաև միջազգային համագործակցության ընդլայնումը ՄԿՈՒ ոլորտում՝ հաջողված փորձից ուսանելու և այդ փորձը կիրառելու համար: Այս համատեքստում անհրաժեշտ է ունենալ միջազգայնորեն ընդունելի կրթական ծրագրերի լիցենզավորման, հավատարմագրման և մշտադիտարկման բարելավված միասնական մեխանիզմներ: Արագ զարգացող և փոփոխվող տնտեսության և աշխատաշուկայի կարիքները բավարելու և պահանջվող մասնագետների, նրանց հմտությունների և կարողությունների լուրջ խնդիր արձանագրվում է այսօր բազմաթիվ վերլուծական փաստաթղթերում: Տնտեսության արագ զարգացող հետազոտությունների համաձայն, ՄԿՈՒ հաստատությունների շրջանավարտների միայն 41%-ն է համարում, որ ձեռք բերված տեսական գիտելիքները համապատասխանում են իրենց աշխատանքի պահանջներին, իսկ 43%-ն էլ կարծում է, որ ձեռք բերված գործնական հմտություններն են համապատասխանում աշխատանքի պահանջներին: Մեկ այլ հետազոտության[1] տվյալներով՝ ուսանողների 86%-ը նշում է, որ ուսումն ավարտելուց հետո աշխատանքային գործունեություն իրականացնելու համար կարիք կունենա լրացուցիչ վերապատրաստման: Գործատուների շրջանում անցկացված հարցման արդյունքներով՝ 78%-ը երիտասարդ մասնագետի աշխատանքի ընդունելիս առնչվում է վերջինիս աշխատանքային փորձի և գործնական կարողությունների պակասի հետ: Մյուս կողմից, դասախոսների մեծ մասը շարունակում է աշխատել ակադեմիական մոտեցմամբ և լիարժեք չի պատկերացնում այն աշխատաշուկան և զբաղմունքները, որի համար կրթում է կադրերին: Արդյունքում՝ երիտասարդների 33%-ն իր աշխատանքի համար կա՛մ գերկրթված է, կա՛մ

[1] ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ, 2019, «ՀՀ աշխատաշուկայի առաջարկի և պահանջարկի վերլուծություն և գնահատում ծրագրի թեմայով աշխատանքների կատարման հաշվետվություն»

	թերկրթված: Վերոնշյալ խնդիրը փաստում է այն մասին, որ բացակայում են մասնագետների պատրաստման, արագ և ճկուն որակավորում ապահովող առավել ճկուն մեխանիզմները, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության արդյունքում միկրոորակավորումների ճանաչման միջոցով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների՝ երկրի և տարածաշրջանի տնտեսական կարիքներին համապատասխանության ապահովում՝ մասնավոր ոլորտի հետ համագործակցությամբ: Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) պետական կրթական չափորոշիչների և դրանց համապատասխան մոդուլային ծրագրերի մշակում ու վերանայում՝ երկրի և միջազգային արդի պահանջներին համապատասխան: Աշխատանքի վրա հիմնված ուսումնական (ԱՀՈՒ) ծրագրերի օրենսդրական և ինստիտուցիոնալ ներդրում: ՆՄՄԿ որակի ապահովման համակարգի բաղադրիչների ներդրում՝ համապատասխան լիցենզավորման, ինստիտուցիոնալ հավաստագրման, ծրագրային հավատարմագրման, միջազգային ստանդարտներին և մշակված չափանիշներին: Արագ և ճկուն որակավորում ապահովող մեխանիզմների ներդրում, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության արդյունքում միկրոորակավորումների ճանաչման միջոցով: **2. Ակնկալվող արդյունքը** Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի յուրաքանչյուր շրջանավարտ կունենա միջազգայնորեն ճանաչելի մասնագիտական որակավորում, որը հնարավորություն կտա նրան կարճ ժամանակում ձեռք բերել արժանապատիվ աշխատանք կամ սկսել սեփական բիզնեսը: Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ արհեստագործական, միջին մասնագիտական կրթությամբ մրցունակ կադրերի պատրաստում: Ուսումնարանը և քոլեջն ավարտելուց հետո ըստ մասնագիտության կաշխատի շրջանավարտների 90%-ը: Բոլոր նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները կունենան եվրոպական չափանիշներին համապատասխան որակի հավաստագրեր:
	1. 2. Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգերի ներդրում, մասնագետների համալրման ճկուն մեխանիզմների ապահովում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է ծրագրի 81-րդ կետով սահմանված դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է ՆՄՄԿ հաստատությունների մարդկային ռեսուրսների հզորացումը: Ժամանակակից աշխարհում ուսուցումը զարգացող հմտություն է, ուստի մանկավարժը պետք է շարունակի սովորել անընդհատ փոփոխվող գիտության, տնտեսության և հասարակության մեջ, ինչը պետությունից պահանջում է կարևորել և ներդրումներ կատարել մանկավարժական անձնակազմի մասնագիտական զարգացման մեջ: Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում մանկավարժական կազմի վերապատրաստման, ատեստավորման և տարակարգի շնորհման համակարգերի ներդրումը կնպաստի առկա որակյալ մանկավարժների բացա-

հայտմանը, խրախուսմանը, երիտասարդ և մոտիվացված մասնագետների՝ ՆՄՄԿ ուսումնական հաստատություն մուտքի ապահովմանը՝ առաջարկելով նրանց մրցակցային և արժանապատիվ աշխատավարձ:
Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը միտված է անձի մոտ ոլորտում և աշխատաշուկայում անհրաժեշտ և պահանջվող մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացմանը, կարևորվում է մասնավոր կազմակերպությունների մասնագետների ներգրավումը կրթական և ուսուցան գործընթացներում, հատկապես ԱՀՈՒ և դուալ ուսուցման պարագայում: ԱՀՈՒ և դուալ ուսուցումը ինքնին նշանակում է ուսուցման կազմակերպում աշխատավայրում, որտեղ հստակ դերակատարում է տրվում կազմակերպությունում համապատասխան մասնագետ-մենթորի ներգրավմանը: Եվրոպական դուալ կրթության ներդրման փորձի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ դուալ ուսուցման մեջ մասնակցող մասնավոր կազմակերպությունների մասնագետների ավելի քան 50 տոկոսը դասավանդում է նաև տվյալ ՄԿՈՒ հաստատությունում:

1. 1. Ներկա վիճակը և առկա խնդիրները

Վերջին տարիների ընթացքում էականորեն փոխվել են ինչպես գիտությունները, գնահատման եղանակները, այնպես էլ տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները, որոնց միջոցով իրականացվում է ուսուցման գործընթացը նոր մեթոդներով և ռազմավարություններով: Կորոնավիրուսի համաճարակը ցույց տվեց հեռավար դասերի և ուսուցման հիբրիդ ռազմավարությունների իմացության կարևորությունը, ՏՀՏ գործիքների կիրառման նոր մեթոդների անհրաժեշտությունը: Ներկայիս համակարգը չի արտացոլում մանկավարժների որակական հատկանիշները և հիմնված չէ արդյունքի գնահատման վրա: Չկա մասնագիտական ոչ բավարար գիտելիքների, հմտությունների պատճառով աշխատանքից ազատված մանկավարժի գեթ մեկ դեպք: Միևնույն ժամանակ, մանկավարժների ցածր աշխատավարձը խոչընդոտում է նոր մանկավարժների համակարգ մուտք գործելուն: Մասնավոր ոլորտի ներգրավվածությունը կրթական գործընթացներում դեռևս գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա:

1. 2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների համալրման, կատարելագործման ու զարգացման մեխանիզմների մշակում և ներդրում՝ ատեստավորման և տարակարգերի շնորհման և հավելավճարների սահմանման միջոցով:
Նշված բոլոր գործընթացների հիմքում մանկավարժական, մասնագիտական (ոլորտային), կազմակերպչական և առաջնորդման գործառույթների նկարագրերի և դրանց ապահովման չափանիշների սահմանում:
Ատեստավորման և տարակարգի շնորհման համակարգի գործարկում, ինչը կնպաստի մանկավարժների մասնագիտական որակների զարգացմանը, ուսուցման գործընթացում ՏՀՏ նպատակային կիրառմանը, սովորողների մոտ կարողունակությունների զարգացմանը, մրցակցային աշխատավարձի ձևավորմանը:
Մասնավոր ոլորտի մասնագետներին գործնական դասավանդման գործընթացում ներգրավելու ճկուն մեխանիզմների ներդրում:

2. Ակնկալվող արդյունքը

	Բոլոր ՆՄՄԿՈՒ հաստատությունները համալրված կլինեն որակավորված և սահմանված ստանդարտներին համապատասխան ատեստավորված մանկավարժներով, որոնք կստանան արժանապատիվ վարձատրություն: Մանկավարժական աշխատողների գործունեությունը կլինի պատշաճ վարձատրվող և հասարակական հեղինակություն վայելող մասնագիտություն:
Նպատակ 2. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) ընդլայնում և մատչելի, ներառական, անվտանգ միջավայրի զարգացում ու հասանելիության ապահովում բնակչության բոլոր խմբերի համար	
2.	**2. 1. Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կառուցակարգի և տեղաբաշխման մոտեցումների մշակում և իրականացում՝ ապահովելով հասանելի և ներառական մասնագիտական կրթական ծառայություններ** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 81-րդ կետով ամրագրված դրույթներից: Համընդհանուր ներառական, սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծումը ենթադրում է բոլորի համար որակյալ կրթական ծառայությունների մատչելիություն և հասանելիություն հանրապետության ողջ տարածքում: Այս առումով ՆՄՄԿ ոլորտում էապես փոփոխությունների անհրաժեշտություն է առաջանում, հատկապես ռազմավարական պլանավորման և ծրագրերի կառավարման, արդյունքի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների, ոլորտի հաստատությունների և ծրագրերի բաշխման կառուցվածքի կարգավորման ուղղությամբ: ՆՄՄ կրթության հասանելիությունը և մատչելիությունն ապահովելու համար բարեփոխումները պետք է ուղղվեն ոլորտում համընդհանուր ներառականության ներդրմանը, խոցելի խմբերի համար նպաստավոր պայմանների ստեղծմանը մասնագիտական կրթություն ստանալու համար, օրինակ՝ մարզային ուսումնական հաստատությունների ուսանողների և մանկավարժական աշխատողների համար տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցումը: ՆՄՄ կրթության հասանելիության և մատչելիության նախապայմաններից է նաև ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների և դրանցում ուսուցանվող կրթական ծրագրերի տեղաբաշխումն ըստ տնտեսության զարգացման ուղղությունների և աշխատաշուկայի առանձնահատկությունների և կարիքի, կրթական ցանցերի և ռեսուրսկենտրոնների ստեղծումը, ռեսուրս պետության համար անվտանգային և ռազմավարական նշանակության մասնագիտական կրթական ծրագրերի մշակումը և տրամադրումը համապատասխան հանրապետական նշանակության հաստատությունների հիմնման միջոցով: ՆՄՄ կրթության հասանելիության ու մատչելիության ապահովման համար անհրաժեշտ է ուսումնական հաստատությունների շենքային, ներառյալ՝ հանրակացարանային, պայմանների բարելավում, ուսումնա-լաբորատոր բազայով և գույքով, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցվածության, ֆիզիկական և խելամիտ հարմարեցումներով ապահովումը: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Կրթության կառավարման ներկայիս համակարգը բախվում է արդյունավետության հետ կապված խնդիրների՝ ելնելով կառավարման կարողությունների պակասից, հատկապես՝ ռազմավարական պլանավորման և ծրագրերի կառավարման ոլորտներում: Կրթության ոլորտի ցածր արդյունավետության մյուս պատճառն էլ ռեսուրսների անարդյունավետ օգտագործումն է՝ արդյունքի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների բացակայության և ոլորտի հաստատությունների չկարգավորված բաշխման կառուցվածքի հետևանքով:

Հայաստանում այսօր լուրջ խնդիր են մասնագիտական կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության խոցելի խմբերի (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց) համար:

Մասնագիտական կրթական ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշները շարունակում են ցածր մնալ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների ցուցանիշների համեմատությամբ: 2019 թվականին մասնագիտական կրթության ոլորտում համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 77.5%: Մասնագիտական կրթության մատչելիության խնդիրն այսօր տարածվում է հանրության առավել լայն շերտերի վրա:

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի 2019 թվականի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» հրապարակման ցուցանիշների համաձայն՝ աղքատների մեջ ամենամեծ խումբը կազմել են միջնակարգ և ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողները՝ 60.5%, իսկ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողները համապատասխանաբար կազմել են 22.8 և 16.7%:

Տարբեր մակարդակների ուսումնական հաստատությունների տեղաբաշխվածությունը հանրապետությունում անհամաչափ է, որը խնդիրներ է ստեղծում ինչպես մատչելիության, այնպես էլ ռեսուրսների արդյունավետ օգտագործման տեսանկյունից: Օրախնդիր է հանրապետությունում կրթական որակյալ ծառայությունների քարտեզի կազմումը՝ մասնագիտությունների ճիշտ տեղաբաշխմամբ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների կեսից ավելին՝ 55.1%-ը, ուսումը ստացել է Երևանում, թեև այստեղ է գտնվում այդ հաստատությունների 35.5%-ը:

ՄԿՈՒ ոլորտում առկա իրավիճակը և հիմնական մարտահրավերները վերլուծելիս կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

- ՄԿՈՒ արդյունավետ կազմակերպման համար գործող օրենքներում սահմանված կառուցակարգերն ու ընթացակարգերը բավարար չեն նոր իրողությունները կարգավորելու համար: Շատ հաճախ ենթաօրենսդրական ակտերը չեն արտահայտում այն լուծումները, որոնք սահմանվել են կամ նպատակադրվել են օրենքի տրամաբանության տակ, ավելին՝ երբեմն հակասում են ծրագրերի ու միջոցառումների կրթության վրա ազդեցության, ֆինանսական ծախսատարության և վերջնարդյունքների կանխատեսման ռիսկերի տեսանկյունից,
- ապահովված չեն բավարար օրենսդրական հիմքեր և գործուն մեխանիզմներ՝ կրթության պետական կառավարման, կրթական գործընթացի կազմակերպման ու գնահատման համակարգերի նկատմամբ մոնիթորինգի, վերահսկողության, հետևաբար նաև՝ դրանց արդյունքի գնահատման ու որակի կառավարման համար,
- կրթության մատչելիությունը, որակը և արդյունավետությունը մնում են ՄԿՈՒ համակարգի հիմնական մարտահրավերները: Մատչելիության առումով խնդիր կա գործող ՄԿՈՒ հաստատությունների օպտիմալ բաշխման և նրանց կողմից իրականացվող մասնագիտությունների օպտիմալ բաշխման հետ: ՄԿՈՒ հաստատությունների դասակարգումը պետք է իրականացվի ըստ նրանց ազգային կամ տեղական նշանակության՝ միաժամանակ ակնկալելով հետագա տարբերակված քաղաքականություն ազգային նշանակության ՄԿՈՒ հաստատությունների նկատմամբ,
- ՄԿՈՒ որակյալ կրթություն կազմակերպելու և աշխատաշուկայի կարիքները բավարարելու համար էական է գործատուների հետ սերտ համագործակցությունը, որը մնում է անբավարար: Մասնավորապես, 2012 թվականին ձևավորված ոլորտային հանձնաժողովներն ունեն սահմանափակ դեր և շրջանակ:

	1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները ՆՄՄԿ ուսումնասիրության արդյունքների հիման վրա ՆՄՄԿ համակարգի բարեփոխված կառուցակարգի հայեցակարգի և բարեփոխմանը միտված գործողությունների ճանապարհային քարտեզի մշակում՝ ներառյալ ՆՄՄԿ հաստատությունների դասակարգում հանրապետական և տեղային նշանակության, ուսումնարանների և քոլեջների վերանայում՝ թողնելով միայն մեկ տիպի հաստատություն՝ քոլեջ: ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում՝ համաձայն քարտեզագրման արդյունքների և որոշված առաջնահերթության: ՆՄՄԿ հաստատությունների նյութատեխնիկական բազայի համալրում և արդիականացում՝ համաձայն քարտեզագրման արդյունքների և որոշված առաջնահերթության: Հանրապետական նշանակության ՆՄՄԿ հաստատություններին անհրաժեշտ արդյունավետ գործառնության, այդ թվում՝ հանրակացարանային կամ կեցության պայմաններով ապահովում: ՆՄՄԿ ոլորտի ռեսուրս-կենտրոնների ստեղծում: Մարզերում գործող ՆՄՄԿ հաստատությունների սովորողների և մանկավարժական աշխատողների տրանսպորտային փոխհատուցման գործիքակազմի ներդրում: ՆՄՄԿ ոլորտում ներառական կրթության փորձնական ծրագրի մշակում և իրականացում, ՆՄՄԿ ոլորտում համընդհանուր ներառականության անցման նպատակով օրենսդրական հիմքերի ստեղծում: **2. Ակնկալվող արդյունքը** Հասանելի և մատչելի ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների ու կրթական ծրագրերի համընդհանուր ծածկույթի ապահովում: ՄԿՈՒ հաստատությունների ուսանողները կունենան պատշաճ կահավորված, սանիտարահիգիենիկ, անվտանգային ստանդարտներին համապատասխան ու մատչելի կրթական միջավայր և հանրակացարանային հնարավորություններ: Յուրաքանչյուրի համար բազմազան հնարավորություններ կստեղծվեն (ֆորմալ և ոչ ֆորմալ) նոր գիտելիքներ ձեռք բերելու, որակավորումը բարձրացնելու, նոր որակավորում ստանալու համար:
	2. 2. ՄԿՈՒ ոլորտում ֆինանսավորման կարգի ներդրում, մասնավորի հետ համատեղ կառավարման և ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման գործիքակազմերի ներդրում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ զարգացման պետական ծրագրի» 82-րդ կետի դրույթներից: Ելնելով մինչև 2030 թվականը Կրթության զարգացման պետական ծրագրով սահմանված նպատակներից՝ ՄԿՈՒ հաստատությունների ֆինանսավորման սխեմաների բարելավման նպատակով անհրաժեշտ է ներդնել պետական բյուջեից և մասնավոր հատվածից համաֆինանսավորման մեխանիզմներ, ինչպես նաև խթանել ՄԿՈՒ հաստատությունների ձեռնարկատիրական գործունեություն՝ առնվազն դուալ ԱՀՈՒ-ի պարագայում: Դա հնարավորություն կտա ՄԿՈՒ հաստատություններին եկամուտ ստանալ արտադրված ծառայությունների և ապրանքների առևտրայնացումից: Ըստ այդմ, անհրաժեշտ է մշակել և բարեփոխել ՄՈՒՀ-երի ֆինանսավորման մեխանիզմը՝ հիմքում նախատեսելով կրթական ծրագրի ապահովման արժեքը, նախատեսել նպատակային ֆինանսավորման մեխանիզմը, ինչպես նաև հստակեցնել պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունները և մեխանիզմները: Պետք է մշակվի մեկ ուսանողի համար ՄԿՈՒ ծախսերի բանաձև, որը հնարավորություն կտա հաշվարկել և

նախատեսել ՄԿՈՒ-ի տրամադրման ծախսերը և այդպիսով բարձրացնել մասնավոր հատվածի կողմից պետական ֆինանսավորման և համաֆինանսավորման արդյունավետությունը: Մշակվելիք օրենսդրական և ֆինանսավորման մեխանիզմներով տարանջատվելու են ուսանողների առաջադիմության՝ կրթաթոշակ և սոցիալական հիմքով փոխհատուցումները՝ նպաստները:
Անհրաժեշտ է կանոնակարգել նաև ՄՈՒՀ-ի ֆինանսավորման աղբյուրները և զարգացնել ձեռնարկատիրական գործունեության իրականացման հնարավորություններն ու կառուցակարգերը, որոնք գործող օրենսդրության և իրավական կարգավորումների պայմաններում գործնականում չէին կենսագործվում: Ուսումնական հաստատությունները պետք է ապահովեն սովորողի գործելու և կենսակերպ ձևավորելու հնարավորությունները՝ միաժամանակ հնարավորություն ունենան ստեղծելու լրացուցիչ միջոցներ: Օրինակ՝ ՄԿՈՒ հաստատությունները կարող են ունենալ իրենց մասնագիտությունների գծով ծառայություններ մատուցելու, ապրանքների արտադրությունն ու վաճառքն ընդլայնելու հնարավորություններ, տարբեր նպատակներով ստեղծել բազմաշահակից աշխատանքային ծրագրեր: Ձեռնարկատիրական գործունեության խթանումը ՄՈՒՀ-երի նյութական ապահովման, աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպման և արդյունավետ գործունեության կարևորագույն երաշխիքն է:
ՆՄՄԿ ոլորտում արդյունավետության կարևոր խթան կարող են հանդիսանալ պետություն – մասնավոր հատված համատեղ կառավարման մոդելների մշակումն ու իրականացումը, որի համար անհրաժեշտ է ստեղծել օրենսդրական հիմքեր: Մասնավորի հետ համատեղ կառավարման նպատակն է սահմանել ուսումնական հաստատությունների գործունեության իրավակազմակերպական տարբեր ձևեր գործատուների կապը, ազդեցությունը ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների գրեթե բոլոր հիմնական ոլորտներում ծավալվող գործունեությանը, գործընթացներին և քաղաքականություններին մեծացնելու համար, ինչպես օրինակ՝ ֆինանսական, կառավարման մարմիններ, ռազմավարական պլանավորում, մարդկային ռեսուրսների կառավարում, ընդունելություն, ուսանողների գնահատում և այլն: Կառավարման նոր մոդելների խթանումը կնպաստի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը Հայաստանի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների շրջանում:

1. 1. Ներկա վիճակը և առկա խնդիրները

Կրթության ոլորտի ցածր արդյունավետության պատճառներից մեկը ռեսուրսների անարդյունավետ օգտագործումն է, արդյունքի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների բացակայությունը:
ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում են ուսումնական հաստատությունների ընթացիկ վարչական և զուտ կրթական ծախսերը, որտեղ ամենամեծ մասնաբաժինը աշխատավարձի հատկացումներն են (նախատեսված ծախսերի ավելի քան 80%-ը): Այնուամենայնիվ, կրթության մասնաբաժինը պետական հատկացումներում մնում է բավականին ցածր: Հաստատություններին տրամադրվող ֆինանսավորումը բավարար չէ ներկայիս կրթական չափանիշներին համապատասխան որակյալ կրթություն ապահովելու համար, հատկապես տեխնոլոգիապես բարդ և նյութական լարված մասնագիտությունների դեպքում:
Վերջին 5 տարում կրթության ոլորտի ծախսերը ՀՀ պետական բյուջեից ՀՆԱ-ի կազմում տատանվել են 2.0-2.4 տոկոսի սահմաններում՝ նվազման միտումով: Համեմատության համար նշենք, որ ՏՀԶԿ երկրներում կրթության ծախսերը միջինում կազմում են ՀՆԱ-ի 5,0%-ը, մինչդեռ ԵՄ 23 երկրներում միջինը 4,5% է: Մասնագիտական կրթության մակարդակով

	պետական ֆինանսավորման շրջանակներում կիրառվող ծախսերի չափորոշիչները հաշվարկվել են դեռևս 1990-ականներին, որից հետո, բացառությամբ որոշ դեպքերի, դրանք ընդհանուր առմամբ չեն վերանայվել: Այս առումով, գործող ստանդարտները հիմնականում չեն արտացոլում ներգրավված ծախսերի իրական մակարդակը, և դրանց կիրառմամբ հաստատություններին տրամադրվող ֆինանսական միջոցները բավարար չեն գործող կրթական չափորոշիչներին համապատասխան որակյալ կրթություն կազմակերպելու համար հատկապես տեխնոլոգիապես բարդ և նյութատար մասնագիտությունների պարագայում: Ավելին, մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի զարգացման միտումները և հատկապես աշխատանքի վրա հիմնված ուսումնառության զարգացումը ենթադրում են, որ հաստատությունների ֆինանսավորման և կառավարման մեխանիզմները պետք է էապես փոխվեն՝ մասնավորապես անցում կատարելով դեպի մասնավորի հետ համատեղ կառավարման մոդելները և ֆինանսավորման բազմազանությունը՝ համադրելով մասնավոր ոլորտի ֆինանսավորումը, հաստատությունների ձեռնարկատիրական գործունեությունը և պետական նպատակային ֆինանսավորումը: Առանձին խնդիր է ոլորտում կիրառվող կրթաթոշակային քաղաքականությունը, որին հատկացվում են զգալի միջոցներ, սակայն մեկ ուսանողին հատկացվող կրթաթոշակը տատանվում է 4-5 հազար Հայաստանի Հանրապետության դրամի սահմաններում, որը չի կարող խթան հանդիսանալ սովորողների առաջադիմության ու կրթական արդյունքի համար: Հետևաբար, հատկացված միջոցները չեն կարող համարվել նպատակային: Անհրաժեշտ է վերանայել կրթաթոշակի չափը՝ մեծացնելով յուրաքանչյուր ուսանողին տրվող կրթաթոշակը և հստակեցնելով կրթաթոշակի տրամադրման պայմաններն ու պահանջները: ՄԿՈՒ, հատկապես ԱՀՈՒ-ի զարգացումը ենթադրում է, որ ինստիտուցիոնալ ֆինանսավորման և կառավարման մեխանիզմները պետք է էականորեն փոխվեն՝ անցնելով մասնավոր կապիտալի կառավարման մոդելներին և դիվերսիֆիկացված ֆինանսավորման՝ պետական-մասնավոր համաֆինանսավորման, ՄԿՈՒ հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության խթանման և այլ միջոցներով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Նախատեսվում է ֆինանսավորման, այդ թվում՝ պետական, տարբերակված քաղաքականության մշակում և գործարկում հանրապետական նշանակության ՆՄՄԿ հաստատություններում: ՄԿՈՒ հաստատությունների՝ մասնավորի հետ համատեղ կառավարման մեխանիզմների և գործիքակազմերի մշակումը, ներդրումը և ընդլայնումը, միաժամանակ պետության համար գերակա ուղղություններով կամ հաստատություններում միջանկյալ փուլում, ըստ անհրաժեշտության, պետության կողմից ամբողջական ֆինանսավորման և կառավարման ապահովումը: ՄԿՈՒ հաստատություններում արտաբյուջետային միջոցների ներգրավում՝ խթանող մեխանիզմների ստեղծմամբ, ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ու ձևերի ընդլայնում (այդ թվում՝ մասնավոր հատվածի հետ համատեղ): ՄԿՈՒ հաստատություններում լիցենզավորված և իրականացվող մասնագիտությունների գծով ծառայություններ մատուցելու, ապրանքներ արտադրելու և իրացնելու, բազմաշաբաթյա աշխատանքային ծրագրեր ստեղծելու հնարավորությունների ընդլայնում՝ այն դիտարկելով աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպման և արդյունավետ գործունեության երաշխիք և սովորողի գործելու ու կենսակերպ ձևավորելու հնարավորություններ:

	Մասնագիտական ուսումնական հաստատություններին պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող մասնագիտություններով պետական աջակցության տրամադրման նոր սկզբունքների և մեխանիզմների ներդրում: **2. Ակնկալվող արդյունքը** Մասնագիտական կրթական համակարգի յուրաքանչյուր շրջանավարտ կունենա միջազգայնորեն ճանաչելի մասնագիտական որակավորում, որը հնարավորություն կտա նրան կարճ ժամանակում ձեռք բերել արժանապատիվ աշխատանք կամ սկսել սեփական բիզնեսը: Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ արհեստագործական, միջին մասնագիտական կրթությամբ մրցունակ կադրերի պատրաստում: Ուսումնարանը, քոլեջն ու բուհն ավարտելուց հետո ըստ մասնագիտության կաշխատի շրջանավարտների 90%-ը: Յուրաքանչյուրի համար բազմազան հնարավորություններ կստեղծվեն (ֆորմալ և ոչ ֆորմալ) նոր գիտելիքներ ձեռք բերելու, որակավորումը բարձրացնելու, նոր որակավորում ստանալու համար:
Բարձրագույն կրթություն **Նպատակ 1. Բարձրագույն կրթության ոլորտում համընդհանուր հասանելի և մատչելի սովորողակենտրոն հանրակրթական միջավայրի ստեղծումը**	
1.	**1. 1. Կրթական ծրագրերի ապահովում և բարելավում** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 78-րդ և 81-րդ կետերի դրույթներից: Գլխավոր նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակի հետագա կատարելագործում և ամբողջական ներդրում՝ ապահովելով որակավորումների համադրելիությունը եվրոպական որակավորումների համապարփակ շրջանակի հետ և համապատասխանությունը ժամանակակից ու առաջանցիկ աշխատաշուկայի և հասարակության զարգացող պահանջներին, որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացի իրականացումը, բարձրագույն կրթական ծրագրերի ու մասնագիտությունների ցանկերի վերանայումն ու արդիականացումը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան և տարանջատումը՝ ըստ որակավորումների ազգային շրջանակի կրթական մակարդակների նկարագրերի, դրանց համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակի սահմանումը, այդ թվում՝ ռազմական կրթության, ապագա աշխատաշուկայի գիտելիքների և հմտությունների անհրաժեշտությունից ելնելով՝ պետական պատվերի ձևավորման միջնաժամկետ ու երկարաժամկետ պլանավորման ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրումը՝ հաշվի առնելով նաև պետության ռազմավարական առաջնահերթությունները՝ զարգացնելով պետության ռազմավարական և անվտանգային առաջնահերթություններից բխող մասնագիտությունների գծով օտարերկրյա պետությունների բուհերում նպատակային գործուղման համակարգը՝ հետագայում մարդկային ներուժն օգտագործելով անհրաժեշտ ուղղություններով մասնագիտական կրթական ծրագրեր ներդնելու և արդիականացնելու նպատակով: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի առաջնային խնդիրներից են բարձրագույն կրթության բովանդակային հենքի և կրթական գործընթացի բարելավումը,

	արդիականացումը, որակի ապահովումը: ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշմամբ: Արագ զարգացող և փոփոխվող հասարակությունն ու տնտեսությունը նոր մարտահրավերներ են ներկայացնում կրթության համակարգին՝ թելադրելով նոր բովանդակության, 21-րդ դարի տնտեսության և քաղաքացիական հասարակության առանցքային կարողությունների ներառման անհրաժեշտություն կրթական ծրագրերում: Հատկապես կարևորվում են սովորողների քննադատական, վերլուծական, նորարարական, հետազոտական հմտությունների զարգացումը, «կանաչ» կրթության բաղադրիչի ներառումը: Բուհերի կողմից իրականացվող կրթական ծրագրերը ներկայումս ամբողջությամբ չեն արտացոլում ՈԱՇ-ի գիտելիք, կարողություն, հմտություն վերջնարդյունքները, ուստի, ներդնելով ոլորտային որակավորումների շրջանակներ, կստեղծվի միջանկյալ գործիք՝ բարձրագույն կրթության ծրագրերը ՈԱՇ-ի վերջնարդյունքներին համապատասխան ձևավորելու համար: Նկարագրված խնդիրները վերաբերում են նաև ռազմական կրթությանն ու կրթական ծրագրերին: Ներկայումս բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներից, Հայաստանի Հանրապետության՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման Բոլոնիայի գործընթացով պայմանավորված միջազգային պարտավորություններից բխող որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթացի խիստ անհրաժեշտություն է առաջացել, որը կնպաստի սահմանված 4-րդ չափանիշի՝ որակավորումների ազգային շրջանակում ՀՀ որակավորումների ներառման գործընթացի թափանցիկության ապահովմանը, եվրոպական որակավորումների համապարփակ շրջանակի հետ համադրելիությանը: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Կմշակվի որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) վերջնարդյունքներին համապատասխան որակավորումների ոլորտային շրջանակների (ՈՈՇ) համակարգ, բուհերում, այդ թվում՝ ռազմական ուսումնական հաստատություններում (ՌՈՒՀ)՝ ըստ ՈՈՇ-ների վերջնարդյունքների, կիրականացվի կրթական ծրագրերի արդիականացում: Կձևավորվեն մասնագիտական խորհուրդներ, որոնց եզրակացությունների հաշվառմամբ կվերանայվի և կարդիականացվի ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը, այդ թվում՝ դրանում ներառելով կարգավորվող և միջոլորտային մասնագիտություններ: Կիրականացվի բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստագրման գործընթաց (արդյունքում կիրապարակվի ինքնահավաստագրման զեկույց): Կսահմանվեն պետական պատվերի ձևավորման միջնաժամկետ ու երկարաժամկետ պլանավորման ինստիտուցիոնալ մեխանիզմներ: ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների վերանայված ցանկը կարող է ենթադրել Կրթական ծրագրերի խոշորացում (հատկապես բակալավրի մակարդակում), ծրագրերի կրկնորդումների նվազեցում, միջոլորտային և կարգավորվող (հատուկ մասնագիտական որակավորում պահանջող, որոնց դեպքում սահմանվում են լրացուցիչ կրթական պահանջներ և աշխատելու պայմաններ) մասնագիտությունների ներդրում: Մասնագիտական փորձագիտական խորհուրդների միջոցով կիրականացվի կրթական ծրագրերի արդիականության և նպատակահարմարության փորձաքննություն (պետական աջակցության համար)՝ հաշվի առնելով աշխատաշուկայի ժամանակակից պահանջները:

	Պետական պատվերի մեխանիզմ ձևավորելիս հաշվի կառնվեն ինչպես աշխատաշուկայի կարիքները, այնպես էլ պետության ռազմավարական առաջնահերթությունները, տարածաշրջանների ու ոլորտների զարգացման ուղղությունները՝ համապատասխան հետազոտությունների, պետական համակարգի ոլորտային մարմինների (մասնավորապես կրթության, էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության և այլն) միջև արդյունավետ և սերտ համագործակցության արդյունքում: Ընդ որում, առավել պահանջարկ վայելող աշխատատեղերի համալրման խնդրի համաչափ կարգավորման նպատակով կնախատեսվեն լրացուցիչ խթանող քայլեր՝ նպատակային ընդունելություն, կրթաթոշակներ, օտարերկրյա պետությունների բուհեր նպատակային գործուղում: **2. Ակնկալվող արդյունքը** Կիրականացվի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ բարձրագույն կրթությամբ մրցունակ կադրերի պատրաստում, բարձրագույն կրթական համակարգի յուրաքանչյուր շրջանավարտ կունենա միջազգայնորեն ճանաչելի մասնագիտական որակավորում, որը հնարավորություն կտա նրան կարճ ժամանակում ձեռք բերել արժանապատիվ աշխատանք կամ սկսել սեփական բիզնեսը:
	1. 2. Հասանելի և մատչելի ուսումնական հաստատությունների ու կրթական ծրագրերի ապահովում և բարելավում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 78-րդ և 81-րդ կետերի դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է՝ Համընդհանուր ներառական կրթական միջավայրի ստեղծումը, հասանելի և մատչելի կրթական ծառայությունների ապահովումը, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ կարիք ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար, բարձրագույն կրթություն ստանալու համար ֆինանսական աջակցության մեխանիզմների բազմազանեցումը, հեռավար կրթություն իրականացնելու ենթակառուցվածքների արդիականացումը: **1. 1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Հայաստանում այսօր լուրջ խնդիր է բարձրագույն կրթության մատչելիությունն ու հասանելիությունը հասարակության խոցելի խմբերի (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց) համար: Բարձրագույն կրթությունը աղքատ և ծայրահեղ աղքատ խավերի համար շարունակում է մնալ ոչ մատչելի: Թվային տեխնոլոգիաների շարունակական արդիականացումը հրամայական է դարձնում ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) առավել լայն կիրառումը: Հատկապես հեռավար/առցանց կրթության ընդլայնման ու զարգացման անհրաժեշտությունն էլ ավելի ընդգծվեց 2020 թվականին, երբ նոր կորոնավիրուսի (Քովիդ-19-ի) տարածման հետևանքով ստեղծված իրավիճակում կիրառվեցին տեղեկատվական և հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաներն ու էլեկտրոնային հարթակները: Համընդհանուր ներառական, սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծումը ենթադրում է բոլորի համար որակյալ կրթական ծառայությունների մատչելիություն և հասանելիություն համապատասխան ենթակառուցվածքների ապահովմամբ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Հասանելի և մատչելի բարձրագույն ուսումնական հաստատությունների և կրթական ծառայությունների առկայությունն ապահովելու համար՝

	բուհերում կստեղծվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար անհրաժեշտ հարմարեցումներով խելամիտ միջավայր, ազգային փոքրամասնությունների համար բարձրագույն կրթության հասանելիության ուղղությամբ կհատկացվեն անվճար տեղեր, կընդլայնվեն և կարդիականացվեն ՀՀ բուհերի, այդ թվում՝ ՌՈՒՀ-երի, հեռավար կրթություն իրականացնելու ենթակառուցվածքները՝ հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրմամբ, կմշակվեն և կբազմազանեցվեն բարձրագույն և մասնագիտական կրթություն ստանալու համար ֆինանսական աջակցության նոր մեխանիզմներ, այդ թվում՝ կրթաթոշակների տրամադրման մեխանիզմների էական լավարկման միջոցով: Ակնկալվում է բուհերում համընդհանուր մատչելիության չափանիշներին համապատասխան ապահովել կրթության առանձնահատուկ կարիք ունեցող ուսանողների համար նվազագույն անհրաժեշտ ֆիզիկական միջավայր՝ խելամիտ հարմարեցումներ, անհատականացված ուսումնամեթոդական նյութերի ու ծառայությունների (թեքահարթակ, սանհանգույց, վերելակ, տեսողական խնդիրներ ունեցողների համար նախատեսված գրականություն, ժեստերի լեզվով կրթության կազմակերպում և այլն): Ազգային փոքրամասնություններին օժանդակելու նպատակով բարձրագույն կրթության բակալավրի կրթական աստիճանում (այդ թվում՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով) կնախատեսվեն պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ տեղեր (յուրաքանչյուր տարի մինչև 7 անվճար տեղերի հատկացում)՝ ակնկալելով խթանել ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ բարձրագույն կրթության մեջ ներառման գործընթացը: Ընդլայնելով և արդիականացնելով ՀՀ բուհերի (նաև ռազմական) հեռավար կրթություն իրականացնելու ենթակառուցվածքները՝ կստեղծվեն հնարավորություններ ավելի մեծ թվով ուսանողների ներգրավվման, այդ թվում՝ սփյուռքահայ, օտարերկրյա, կբարձրանա բուհերի գրավչությունը: Մարզաբնակ, անապահով ուսանողներին կընձեռվի մատչելի կրթության հնարավորություն: Բարձրագույն կրթություն ստանալու համար ֆինանսական աջակցության նոր բազմազանեցված սկզբունքներն ուղղված կլինեն ուսման վարձի փոխհատուցմանը սոցիալապես խոցելի կամ այլ առանձին խմբերի ուսանողներին, ֆինանսական խրախուսմանը՝ ուսուցման հետ կապված այլ ծախսերի (կեցության, սննդի, փոխադրամիջոցի) կամ ակադեմիական և հետազոտական ձեռքբերումների համար (լավագույն ուսանողներին անվանական կրթաթոշակներ և այլն)՝ բացառելով բարձր առաջադիմություն ցուցաբերող, սակայն սոցիալապես անապահով կամ վճարունակության ոչ բավարար մակարդակ ունեցող ուսանողների անվճարունակության պատճառով բուհական կրթական համակարգից դուրս մնալու դեպքերը: **2. Ակնկալվող արդյունքը** Հասանելի կլինեն մատչելի բարձրագույն կրթական ծառայություններ, յուրաքանչյուրի համար բազմազան հնարավորություններ կստեղծվեն (ֆորմալ և ոչ ֆորմալ) նոր գիտելիքներ ձեռք բերելու, որակավորումը բարձրացնելու, նոր որակավորում ստանալու համար:
	1. 3. Ակադեմիական կազմի շարունակական մասնագիտական զարգացում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 81-րդ կետի 6-րդ ենթակետի «բ», «դ» «ժ» պարբերությունների, 83-րդ կետի 11-րդ ենթակետի դրույթներից:

Նպատակն է՝ գիտամանկավարժական կրթության արդիականացումը բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ ռազմական, ակադեմիական կազմի պաշտոնների համալրման, ինչպես նաև ատեստավորման և վերապատրաստման, վարձատրության նոր արդյունավետ մեխանիզմների մշակումը, որոնք կնպաստեն մասնագիտական առաջխաղացման և միջազգային վարկանիշային պարբերականներում գիտական աստիճանի հավակնողների ու հետազոտողների գիտական ղեկավարների միջին տարիքային ցուցանիշը բարելավելու համար գիտական և ակադեմիական գործունեությամբ զբաղվելու գրավչության բարձրացմանը:

1. 1. Ներկա վիճակը և առկա խնդիրները

Ներկայումս համալսարանական բարձրագույն կրթության մակարդակում նկատվում են դասախոսական անձնակազմի ծերացում և ցածր վերարտադրողականություն հատկապես ԲՏՃՄ (բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության, մաթեմատիկայի) ուղղություններում, որոնք հանգեցնում են գիտամանկավարժական անձնակազմի որակական անկման: Դասախոսների 39%-ից ավելին 55 տարեկանից բարձր է, 21%-ից ավելին՝ 65-ից բարձր, իսկ մինչև 35 տարեկան դասախոսներն ընդհանուրի մեջ կազմում են 16%: Դասախոսների 44%-ը 35-55 տարիքային խմբում է: Հատկանշական է փաստել ծերացումը հատկապես ԲՏՃՄ մասնագիտություններում: Ավելին, մարզային բուհերում որոշ մասնագիտություններով առաջիկա տարիներին մասնագետներ չլինելու պատճառով կարող են կրթական ծրագրեր փակվել: Միջանկյալ լուծումները՝ դասախոսների գործուղումները Երևանից դեպի մարզային բուհեր, չեն կարող լուծել համակարգային խնդիրը: Դասախոսի աշխատանքը գրավիչ չէ երիտասարդների համար, և բուհական համակարգն առաջիկա տարիներին նոր կադրերով համալրելու կարիք կլինի: Ասպիրանտների և հայցորդների գիտական ղեկավարների միջին տարիքը բարձր է:

Լրջագույն խնդիր է նաև ոլորտում վարձատրության չափը, որը նույնպես էական խոչընդոտ է որակյալ մասնագետներին ներգրավելու համար, ուստի անհրաժեշտ է ներդնել մասնագիտական զարգացման և վարձատրության խրախուսման փոխկապակցված մեխանիզմ: Միաժամանակ, բացակայում է բուհերում ակադեմիական կազմի պաշտոնների համալրման և դասախոսական կազմի վերապատրաստումների արդյունավետ համակարգը: Նշված խնդիրները բնորոշ են նաև ՌՈՒՀ-երին:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Մշակել դասախոսի ուսումնագիտական բեռնվածության (պարտադիր հետազոտական բաղադրիչի ներառմամբ) և վարձատրության հաշվարկման համընդհանուր մեթոդաբանություն:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ ռազմական ակադեմիական կազմի պաշտոնների համալրման, մասնագիտական առաջխաղացման, ինչպես նաև ատեստավորման և վերապատրաստման արդյունավետ մեխանիզմների (փոխկապակցելով աշխատանքի վարձատրության հետ) մշակում ու ներդրում: Հրավիրյալ պրոֆեսորների ընդգրկում բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ ներառելով նաև սփյուռքահայ գիտնականներին:

Միջազգային վարկանիշային պարբերականներում գիտական աստիճանի հավակնողների ու հետազոտողների աշխատանքների տպագրությունների խթանման համար խրախուսման մեխանիզմների մշակում և ներդրում:

Նոր մեթոդաբանությամբ սահմանված վարձատրությունը կնպաստի նաև հրավիրյալ դասախոսների, այդ թվում՝ սփյուռքահայ գիտնականների շրջանում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդման գրավչության բարձրացմանը:

	2. Ակնկալվող արդյունքը Աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան մրցունակ կադրերի ներգրավում բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական կազմում՝ գրավիչ վարձատրության պայմաններով, այդ թվում՝ սփյուռքահայ գիտնականների համար, դասախոսի հեղինակության և հանրային դերի բարձրացում:
Նպատակ 2. Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում	
2.	**2. 1. Կրթության կառավարման համակարգի բարեփոխումներ** **1⍰ Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ⍰ զարգացման պետական ծրագրի» 81-րդ և 82-րդ կետերով ամրագրված դրույթներից: Նպատակն է՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմների և պահանջների սահմանումը, բարձրագույն կրթության արդյունավետ, կատարողականի արդյունքային ցուցանիշների և վերջնարդյունքների վրա հիմնված կառավարման համակարգի և կատարողականի արդյունքային ցուցանիշների (KPI) բաղադրիչի ներառմամբ՝ ֆինանսավորման նոր արդիական բանաձևի ներդրում, կրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործարկում և այլն: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Բարձրագույն կրթության ոլորտի խնդիրներից է արդյունավետ կառավարման և հավասարակշռված հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմների կիրառությունը: Կա կառավարչական կարողությունների պակաս հատկապես ռազմավարական պլանավորման և ծրագրերի կառավարման ոլորտներում: Կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (ԿԿՏՀ) ամբողջական չէ: Ոլորտի զարգացմանն ուղղված քաղաքականության ուղղությունները հաճախ նպատակին չեն ծառայում, քանի որ մեծ մասամբ հիմնված չեն փաստերի և իրավիճակային վերլուծությունների վրա: Ցածր արդյունավետության մյուս պատճառը ռեսուրսների անարդյունավետ օգտագործումն է: Բարձրագույն ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեներում, պետության մասնակցության ցածր մակարդակով պայմանավորված, մեծացել է զգայունությունն ուսանողների թվի նկատմամբ: ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ ռազմական, կրթությունն իրականացվում է ոչ արդիական մեթոդներով: Ներդրված չեն կրթության կազմակերպման և կառավարման ճկուն թվային մեխանիզմներ: Առկա է բարձրագույն կրթության կառավարման անարդյունավետություն, որն ուղեկցվում է անհրաժեշտ որակավորված կառավարիչների պակասուրդով: Ուսումնական հաստատությունները պարբերաբար մշակում են ռազմավարական պլաններ, արդյունավետության ցուցանիշներ և հավատարմագրման միջոցով հաշվետվողական են հանրության առջև: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը թույլ է տալիս գնահատել բարձրագույն ուսումնական հաստատության գործընթացները՝ հիմնվելով ոչ միայն փաստացի կատարված գործողությունների, այլ նաև դրանց արդյունքում ձեռք բերված վերջնարդյունքի վրա: Սակայն, բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարողականի արդյունքային ցուցանիշների համակարգը, բացառությամբ դրա որոշ բաղադրիչների, ներդրված չէ բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչը չի

համապատասխանում ժամանակակից մոտեցումներին՝ կառավարման արդյունավետության բարձրացմանը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորման գործող բանաձևը ժամանակավրեպ է, մշակվել է դեռևս Խորհրդային միության ժամանակաշրջանում, որը չի արտացոլում ժամանակակից մոտեցումներ: Բանաձևով բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրվում է միայն բազային ֆինանսավորում, որը բավարար չէ որակյալ կրթություն կազմակերպելու համար, չի ստեղծում բուհերի, այդ թվում՝ ՌՈՒՀ-ի միջև առողջ մրցակցություն և բարեփոխումների կամ բարելավման նկատմամբ շահադրդում: Առկա է ֆինանսավորման ծավալների բարձրացման անհրաժեշտություն: Հրամայական է նաև մատուցվող ծառայությունները որակական նոր հարթություն տեղափոխելու և կրթական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու՝ ժամանակակից ՏՏ գործիքների կիրառմամբ:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմների և պահանջների սահմանում՝ ապահովելու հաստատության պատասխանատվությունը և հաշվետվողականությունը անմիջական շահառուների, պետության ու հասարակության առջև:

Սահմանել և ներդնել բուհական կառավարիչների վերապատրաստման իրավական հենք:

Մշակել և գործարկել բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսավորման արդիական բանաձև:

Մշակել բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջընթացը գնահատող կատարողականի արդյունքային ցուցանիշների (ԿԱՑ) համակարգ և դրանց արդյունքով ֆինանսավորման կշիռներ սահմանելու մեխանիզմ՝ ելնելով պետության ռազմավարական առաջնահերթություններից:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ներդնել կրթության կազմակերպման և կառավարման էլեկտրոնային հարթակ:

Ամբողջականացնել և գործարկել կրթության կառավարման տեղեկատվական հարթակը:

Բուհերում պետական աջակցությամբ ձևավորել անձեռնմխելի դրամագլուխներ՝ որպես տվյալ մշակույթի ներդրման մեկնարկ:

Ակնկալվում է մշակել բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության ցուցանիշների համակարգ, մշակել ֆինանսավորման նոր մեխանիզմ/բանաձև, որը կներառի բազային կամ ինստիտուցիոնալ ֆինանսավորում (ենթակառուցվածքների զարգացման, կրթության որակի բարելավման համար, որը կախված չէ բուհի ուսանողներին տրամադրվող պետական կրթաթոշակների թվից), հետազոտական բաղադրիչ, մրցակցային ֆինանսավորում, որը կտրամադրվի բուհի զարգացմանն ուղղված նորարարական-նպատակային ծրագրերի ֆինանսավորմանը՝ մրցութային հիմունքներով, նպատակային ֆինանսավորում (պետության կողմից որոշակի միջոցառումների իրականացման համար): Բուհի ֆինանսավորման հիմք կհանդիսանան նաև գործունեության արդյունքային ցուցանիշները (ԿԱՑ)՝ ըստ բուհի առանձնահատկությունների: Միաժամանակ, ներկայացված մեխանիզմը թույլ կտա ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն բուհերի և այլ շահակիցների շրջանում: Այսօր շատ է խոսվում բուհերի ինքնավարության մասին, որը լիարժեք գործարկելու համար պետք է ունենալ նաև հաշվետվողականության մեխանիզմներ, որպեսզի հնարավոր լինի չափելի դարձնել բարձրագույն ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ ռազմական, գործունեության և որդեգրած ռազմավարության/տեսլականի համապատասխանելիությունը: Հաշվետվողականության մեխանիզմների միջոցով կգնահատվի բուհերի գրանցած առաջընթացը, և

	կձեռնարկվեն խրախուսման միջոցներ, որը կուղղորդի բուհերին հետագայում նախաձեռնողականություն դրսևորելու այլ աղբյուրներից միջոցներ ներգրավվելու համար: Միաժամանակ, բուհերում պետական աջակցությամբ կձևավորվի անձեռնմխելի դրամագլուխ՝ ֆինանսական միջոցների աղբյուր: Բարձրագույն կրթության համակարգի արդյունավետ և ստեղծարար սովորելու միջավայրի վերափոխմանը համարժեք կներդրվեն տվյալների վրա հիմնված կառավարման համակարգ, թվային և այլ գործիքներ: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների լայն կիրառումն ուսուցման ու կրթության կառավարման համակարգերում կնպաստեն դերերի և պարտականությունների արդյունավետ բաշխմանը մասնակիցների միջև, կառավարման նոր որակի ապահովմանը և արդյունավետության բարձրացմանը: Բարձրագույն ուսումնական հաստատություններում կներդրվեն թվային հարթակներ, որոնք կապահովեն ճկուն և թափանցիկ ուսումնառության գործընթաց (բարձրագույն կրթության հիմնական կրթական ծրագրերի իրականացում ուսանողի լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ, այդ թվում՝ հեռավար)՝ բարելավելով կրթական ծառայությունների որակը, շարունակական կնվազեցվեն կոռուպցիոն ռիսկերը, կբարձրանա բարեվարքության սկզբունքներին և վարքականոններին հետևելու աստիճանը՝ միաժամանակ տալով հնարավորություն ավելացնելու գրավչությունը և ընդլայնելու համագործակցության շրջանակները այլ առաջատար երկրների բուհերի հետ, ապահովելով շարժունության գործընթացի թվային կառավարումը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների, այդ թվում՝ ռազմական, խոշորացման ծրագրի շրջանակներում կսահմանվեն կառավարիչներին ներկայացվող պահանջներ և նկարագրեր, կներդրվի վերաորակավորման, պարտադիր վերապատրաստման համակարգի իրավական հենք: **2. Ակնկալվող արդյունքը** Կրթության կազմակերպման սովորողակենտրոն և մասնակցային մեխանիզմների ընդլայնում, տվյալների վրա հիմնված կառավարման համակարգի ամրապնդում՝ կառավարման և որոշումների կայացման ներառական, մասնակցային, ինքնավար, թափանցիկ և հաշվետու համակարգի ներդրում, բարձրագույն կրթության ոլորտին հատկացվող պետական ֆինանսավորման աստիճանական աճ՝ պետական ֆինանսավորման ձևերի բազմազանեցմամբ և արդյունավետ մեխանիզմների ներդրմամբ (կստեղծվի 100% պետական ֆինանսավորմամբ մինչև ութ բուհ՝ չբացառելով վճարովի ուսուցման հնարավորությունը), Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը ձեռք կբերի միջազգային հեղինակություն:
	2. 2. Ցանցային կրթական համակարգերի ներդրում և ենթակառուցվածքների բարելավում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 81-րդ և 82-րդ կետերի դրույթներից: Նպատակը ՀՀ-ում բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացումն է, որը կապահովի ռեսուրսի (ներառյալ՝ մարդկային) առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, համակարգի գործընթացային, ծախսային և կառավարման արդյունավետության բարձրացումը, կրթության գրավիչ միջավայրի ստեղծումը՝ ցանցային կրթական համակարգերի ներդրմամբ, բուհերի ներքին արդյունավետության բարձրացումը, ինչպես

նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցային միջավայրի ապահովումը և միջոլորտային ու հետազոտական ուղղությունների խթանումը:

1. 1. Ներկա վիճակը և առկա խնդիրները

Բարձրագույն կրթության համակարգում կարևորագույն խնդիր են նաև ժամանակակից պահանջներին համապատասխան շենքերի և լսարանների պակասը, լաբորատոր սարքավորումների և նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածությունը: Թեև վերջին տարիներին «Կրթության բարելավում» ծրագրի շրջանակներում բուհերում որոշ ուղղություններով բարելավվել են ուսումնական լաբորատոր ենթակառուցվածքները, սակայն լաբորատոր ենթակառուցվածքների բարելավման խնդիրը շարունակում է մնալ արդիական: Արագ զարգացող և փոփոխվող հասարակությունն ու տնտեսությունը նոր մարտահրավերներ են ներկայացնում կրթության համակարգին՝ թելադրելով նոր բովանդակության, 21-րդ դարի տնտեսության և քաղաքացիական հասարակության առանցքային կարողությունների ներառման անհրաժեշտություն կրթական ծրագրերում: Ցածր է համակարգի արդիականացման, միջազգայնացման և դրանցից բխող մրցունակության աստիճանը. Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները միջազգային վարկանիշավորման աղյուսակներում ներառված չեն լավագույն հինգհարյուրյակում: Ներկայում արձանագրված լավագույն ցուցանիշը Երևանի պետական համալսարանինն է, որն ընդգրկվել է QS WorldUniversityRankings 2022 թվականի լավագույն հազարյակում: Կրթության ոլորտի ցածր արդյունավետության մյուս պատճառը ռեսուրսների անարդյունավետ օգտագործումն է, որն անդրադառնում է ինչպես արդյունքի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմների բացակայության, այնպես էլ ոլորտի հաստատությունների չկանոնակարգված տեղաբաշխման և կառուցվածքի վրա: Ֆինանսական կառավարման մեխանիզմները հնացած են: Տակավին խնդիր է ամբողջական անցումը ծրագրային բյուջետավորմանը: Այսպիսով, բարձրագույն կրթության ծառայությունների մատուցման աշխարհագրության վերաբերյալ ռազմավարական մոտեցման բացակայությունը մեծացնում է ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը խոչընդոտող գործոնները տարածքային անհամաչափության, նյութատեխնիկական բազայի ոչ լիարժեք կիրառելիության, ֆինանսավորման ոչ ճկուն մեխանիզմների և առհասարակ կրթական արդյունքի ստեղծման առումներով: Մրցունակ կրթական համակարգ ունենալու համար անհրաժեշտ է լինել միջազգային կրթական գործընթացների ոչ միայն ակտիվ մասնակից, այլ նաև ստեղծել հավելյալ արժեք և ունակ լինել կրթական ծառայություններ արտահանելու: Այս առումով անհրաժեշտ է բարձրացնել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի միջազգային գրավչությունը: Հայաստանի դիրքը կարիք ունի առավել ամրապնդման ինչպես երկրի բուհերն աշխարհի լավագույն բուհերի ցանկում ընդգրկելու, այնպես էլ մեր կրթական նորարարությունները համաշխարհային հարթակներում ճանաչելի դարձնելու առումով: Զարգացման հավակնոտ և փոխկապակցված քայլերի դեպքում Հայաստանը կարող է մի կողմից դառնալ կրթական ծառայություններ մատուցող երկիր՝ բարձրագույն կրթության ոլորտում տարածաշրջանային կենտրոն դառնալու իրատեսական հեռանկարով:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների խոշորացում՝ ըստ ուղղությունների (այդ թվում՝ գիտահետազոտական ինստիտուտների հետ միավորում), հաշվի առնելով նաև մարզերի զարգացման ուղղությունները:

	Ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ: Բարձրագույն ուսումնական հաստատությունները համալրել որակյալ կրթության կազմակերպման և հասանելիության համար անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Արդիականացնել և համալրել բուհերի (այդ թվում՝ գիտակրթական կազմակերպությունների հետ համատեղ օգտագործման) լաբորատոր և նորարարական ենթակառուցվածքներն ու միջբուհական, միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբորատորիաներն ու գիտակրթական ամբիոնները: Ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ու ձևերի ընդլայնում (այդ թվում՝ մասնավոր հատվածի հետ համատեղ)՝ խթանելով նորարարական ստարտափ և ձեռնարկատիրական ինկուբատոր էկոհամակարգերի ստեղծումը բուհերում և դրանց հետագա առևտրայնացումը: **2. Ակնկալվող արդյունքը** Կստեղծվի 100% պետական ֆինանսավորմամբ մինչև ութ բուհ՝ չբացառելով վճարովի ուսուցման հնարավորությունը: Առնվազն չորս բուհ ընդգրկված կլինի միջազգային վարկանիշային (Թայմսի բարձրագույն կրթության՝ աշխարհի համալսարանների վարկանիշ – TimesHigherEducationWorldUniversityRankings, Աշխարհի համալսարանների քյուէս վարկանիշ - QS WorldUniversityRankings կամ Աշխարհի համալսարանների ակադեմիական վարկանիշ - ARWU, ShanghaiRanking) աղյուսակների լավագույն 500-ի մեջ: Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը ձեռք կբերի միջազգային հեղինակություն, որի շնորհիվ Հայաստանում սովորող օտարերկրյա ուսանողների թիվն առնվազն կկրկնապատկվի:
	2.3. Միջազգային ստանդարտներին համապատասխան բարձրագույն կրթության որակի բարելավման միասնական չափանիշների մշակում և ներդրում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ զարգացման պետական ծրագրի» 81-րդ, 82-րդ և 83-րդ կետերում ամրագրված դրույթներից: Նպատակն է՝ որակի վերահսկողության գործիքակազմի և ընթացակարգերի ամբողջական և լիարժեք համապատասխանությունը որակի չափման միջազգային շրջանակներին և գործընթացներին, կրթության որակի հավաստման և գնահատման վստահելի և օբյեկտիվ համակարգի ձևավորումը և ներդրումը՝ ներառելով ինչպես հստակ սահմանված վերջնարդյունքների, այնպես էլ ուսումնառության միջավայրի, գործընթացի, որակի ապահովման գործող համակարգերի գնահատումը: **1.1 Ներկա վիճակը և առկա խնդիրները** Բուհական ինքնավարության և ակադեմիական ազատության ապահովման և զարգացման պետական քաղաքականության պայմաններում որակյալ կրթության ապահովման համար անհրաժեշտ է ունենալ միջազգայնորեն ընդունելի կրթական ծրագրերի լիցենզավորման, հավատարմագրման և մշտադիտարկման լրամշակված միասնական գործիքներ: Ներկայում այդ գործիքներն առկա են, սակայն կրթական ծրագրերի լիցենզավորման պայմանները և պահանջները ժամանակավրեպ են, ընդհանրական բնույթի՝ առանց ոլորտային տարան-

	ջատումների: Պետության կողմից մասնավորապես սահմանված չեն բուհերի ենթակառուցվածքների, ընդհանուր տարածքի, կառավարման, ուսանող/դասախոս հարաբերակցության, ռազմավարական նպատակադրումների և այլ նվազագույն միասնական ստանդարտներ: Այս առումով անհրաժեշտ է ունենալ միասնական մոտեցումներ, որպեսզի Հայաստանի Հանրապետությունն ունենա աշխարհի լավագույն փորձին համադրելի բարձրագույն կրթության ստանդարտների շրջանակ: Հայաստանի Հանրապետությունում չկա բարձրագույն կրթության ստանդարտների մշակման և հաստատման մշտական աշխատանքային մարմին՝ տարբեր բուհերի ներկայացուցիչների ներգրավվածությամբ: Նման սկզբունքով աշխատող մշտական մարմիններ կան տարբեր երկրներում: Ավելին, հավատարմագրման չափանիշները նույնպես վերանայման կարիք ունեն: Լիցենզավորման և հավատարմագրման գործիքները իրար համահունչ չեն և չեն փոխլրացնում միմյանց: Մարդկային կապիտալի զարգացման կարևորագույն ուղղություններից է նաև ոչ ֆորմալ կրթությունը, որը գնալով ավելի նշանակալի կշիռ է ձեռք բերում՝ հնարավորություն ընձեռելով յուրաքանչյուր կրթական մակարդակում և մարդու կյանքի յուրաքանչյուր փուլում մեծացնելու սովորելու արդյունավետությունը, մարդու կարողությունների զարգացումը: Ներկայում ոչ ֆորմալ ուսումնառության արդյունքներով միկրոորակավորումների (micro-credentials) ներդրման իրավական հենքը մշակված չէ, որով հնարավորություն կընձեռվի բուհերին ոչ ֆորմալ ուսումնառության արդյունքներով նախատեսել և իրականացնել միկրոորակավորումներ շնորհող ծրագրեր, արդյունքում կապահովվեն աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման հնարավորությունները: Ասպիրանտական կրթության կազմակերպումը և գիտական աստիճանաշնորհման պահանջները վերանայման կարիք ունեն, քանի որ դրանք այլևս արդիական չեն: Նախատեսվում է բարձրագույն և հետբուհական կրթության մակարդակները սահմանել եռաստիճան համակարգում՝ բակալավրի, մագիստրոսի և դոկտորի որակավորման աստիճաններով: Դոկտորի որակավորման աստիճանի շնորհումը հիմք է գիտական միաստիճան (PhD) համակարգի անցման: Այս փոփոխությամբ անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել և սահմանել բուհում բարձրագույն կրթության երրորդ մակարդակի չափանիշներն ու պայմանները: Ավելին, անհրաժեշտ է ներդնել նաև գիտահետազոտական, գիտատեխնիկական և նորարարական լուծումներ առաջադրող կրթության կազմակերպման համագործակցային նոր մոդելներ: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Որակի վերահսկողության գործիքակազմի՝ ստանդարտի (լիցենզավորման, նախահավատարմագրման, հավատարմագրման նոր չափանիշներ) մշակում և ներդրում: Բուհերում մրցունակ կրթական ծրագրերի մշակման, ներդրման և մշտադիտարկման միասնական սկզբունքների և չափանիշների վերանայում: Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի՝ ասպիրանտուրա, արդիականացում՝ անցում գիտական միաստիճան (PhD) համակարգի և դոկտորի որակավորման աստիճանի, գիտահետազոտական կրթության և գիտական աստիճանաշնորհման չափանիշների ու պայմանների հստակեցում՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին, ասպիրանտուրային (բարձրագույն կրթության երրորդ մակարդակին) հատկացվող պետական ֆինանսավորման ավելացում: Մշակել միկրոորակավորումների (micro-credentials) ներդրման իրավական հենք, միկրոորակավորումների շնորհման լիցենզավորման և հավատարմագրման չափանիշներ, ընթացակարգեր:

	2.Ակնկալվող արդյունքը Բարձրագույն կրթական համակարգի յուրաքանչյուր շրջանավարտ կունենա միջազգայնորեն ճանաչելի մասնագիտական որակավորում, որը հնարավորություն կտա նրան կարճ ժամանակում ձեռք բերել արժանապատիվ աշխատանք կամ սկսել սեփական բիզնեսը: Բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունները կունենան եվրոպական չափանիշներին համապատասխան որակի հավաստագրեր: Կրթություն-գիտություն փոխգործակցություն, ասպիրանտների թվի կտրուկ աճ: Յուրաքանչյուրի համար բազմազան հնարավորություններ կստեղծվեն (ֆորմալ և ոչ ֆորմալ) նոր գիտելիքներ ձեռք բերելու, որակավորումը բարձրացնելու, նոր որակավորում ստանալու համար:
	Նպատակ 3. Բարձրագույն կրթության միջազգայնացում
3.	**3. 1. Բարձրագույն կրթության ոլորտում ակադեմիական միջազգային շարժունության խթանում** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 83-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 8-16-րդ ենթակետերի դրույթներից: Նպատակն է՝ տարածաշրջանում և մասնավորապես եվրասիական տարածաշրջանում Հայաստանի՝ որպես կրթական ծառայություններ և արտադրանք արտահանող երկրի դիրքավորում, ամբողջական և բովանդակային ինտեգրումը, միջազգային հարթակներում հայկական կրթական ծառայությունների, հայերենի՝ որպես օտար լեզվի գրավչության բարձրացումը, բուհերում սովորող օտարերկրյա ուսանողների թվի ավելացումն ու աշխարհագրության ընդլայնումը: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Մրցունակ կրթական համակարգ ունենալու համար անհրաժեշտ է լինել միջազգային կրթական գործընթացների ոչ միայն ակտիվ մասնակից, այլ նաև ստեղծել հավելյալ արժեք և ունակ լինել կրթական ծառայություններ արտահանելու: Այս առումով անհրաժեշտ է բարձրացնել Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի միջազգային գրավչությունը: Հայաստանի դիրքը կարիք ունի առավել ամրապնդման ինչպես երկրի բուհերը աշխարհի լավագույն բուհերի ցանկում ընդգրկելու, այնպես էլ մեր կրթական նորարարությունները համաշխարհային հարթակներում ճանաչելի դարձնելու առումով: Հայաստանի Հանրապետության մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ գրավիչ են հիմնականում Մերձավոր Արևելքի և Ասիայի երկրների համար: Զարգացման հավակնոտ և փոխկապակցված քայլերի դեպքում Հայաստանը կարող է մի կողմից դառնալ կրթական ծառայություններ մատուցող երկիր՝ բարձրագույն կրթության ոլորտում տարածաշրջանային կենտրոն դառնալու իրատեսական հեռանկարով, մյուս կողմից՝ արտահանել իր կրթական արտադրանքը: Բարձրագույն կրթական համակարգում նկատվում է միջազգայնացման և մրցունակության ցածր մակարդակ: Առկա է միջազգայնացմանը նպաստող գործիքակազմերի (օրինակ՝ օտար լեզուներով իրականացվող կրթական ծրագրերի, միջազգային ուսանողներին հայկական կրթական համակարգի վերաբերյալ տեղեկատվություն

ապահովող միասնական հարթակի, հայկական բուհերում սովորելու համար առցանց դիմելու և գրանցվելու հնարավորության և այլն) սակավություն: Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) կարևորագույն հանձնառություններից է ուսանողների և ակադեմիական աշխատակազմի շարժունության և համալսարանների միջև համագործակցությունների ընդլայնումը: ԵԲԿ տարածքում դեռևս 2020 թվականի համար ընտրված էր ակադեմիական շարժունության 20% թիրախաչափ: COVID-19 համաճարակի պայմաններում այս սահմանաչափը միջինում չի պահպանվել, Հայաստանի Հանրապետությունում ակադեմիական շարժունությունը մոտավորապես կազմում է ընդամենը 4.8%: Շարժունությունը կարևորագույն ցուցանիշ է նաև աշխարհի համալսարանների վարկանշավորման աղյուսակներում դիրքավորվելու համար: ՀՀ բուհերից ընդամենը 2-ն է դիրքավորված 800-ից 1000 միջակայքում:

Տեղեկատվական հարթակների ստեղծման ուղղությամբ տարվել են աշխատանքներ: Մասնավորապես, Էրազմուս+ BOOST միջազգայնացմանն ուղղված կարողությունների զարգացման ծրագրի արդյունքում ստեղծվել է Study in Armenia (https://studyinarmenia.am/en) հարթակը: Նախատեսվում է վերանայել և արդիականացնել այդ հարթակը՝ ապահովելով տեղեկատվության պարբերաբար թարմացում՝ մեծացնելով բուհերի ընդգրկվածությունն ու հնարավորինս ապահովելով հարթակի ամբողջական հասանելիությունը դիվանագիտական խողովակների և միջազգային կառույցներում հայաստանյան ներկայացուցչությունների միջոցով:

1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները

Բարելավել ՀՀ ուսումնական հաստատություններ ընդունվող օտարերկրյա դիմորդներին ներկայացվող (ընդունելություն, տեղափոխություն, վերականգնում) պահանջներն ու ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը:

Օտարերկրյա ուսանողների համար ՀՀ բուհերի և ՀՀ-ում ուսումնառության վերաբերյալ տեղեկատվական միասնական հարթակի ձևավորում և ներդրում:

Բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում օտար լեզվով դասավանդման հնարավորությունների ընդլայնում և հավասար հնարավորությունների ստեղծում ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզվով դասավանդվող կրթական ծրագրերի համար:

Բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման մեխանիզմների բարելավում, Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակավորումների փոխճանաչման ապահովում:

Հայաստանում և օտարերկրյա համալսարաններում հայագիտական միջազգային խորհրդաժողովների կազմակերպում, կրթամշակութային միջոցառումների անցկացում:

Օտարերկրյա համալսարաններում ցանցային ձևաչափով հայագիտական կենտրոնների գործունեության ապահովում:

Երկու և ավելի բուհերի (այդ թվում՝ օտարերկրյա) կողմից կրթական ծրագրերի համատեղ մշակում և իրականացում:

2. Ակնկալվող արդյունքը

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը ձեռք կբերի միջազգային հեղինակություն, որի շնորհիվ օտարերկրյա ուսանողների թիվն առնվազն կկրկնապատկվի:

Առնվազն չորս բուհ ընդգրկված կլինի միջազգային վարկանիշային (Թայմսի բարձրագույն կրթության՝ աշխարհի համալսարանների վարկանիշ –

	TimesHigherEducationWorldUniversityRankings, Աշխարհի համալսարանների քյուէս վարկանիշ - QS WorldUniversityRankings կամ Աշխարհի համալսարանների ակադեմիական վարկանիշ - ARWU, ShanghaiRanking) աղյուսակների լավագույն 500-ի մեջ: Սփյուռքում գործող հայկական կրթօջախները հնարավորին չափ ինտեգրված կլինեն Հայաստանի կրթական համակարգին:
Ոչ ֆորմալ կրթություն **Նպատակ 1. Ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմների ներդրում, մեծահասակների և երիտասարդների հարատև ուսումնառության և մարդկային կապիտալի շարունակական զարգացման միջավայրի ու պայմանների ապահովում**	
1.	**1. 1. Ոչ ֆորմալ կրթության զարգացման գործիքակազմերի ներդրում՝ ներառյալ օրենսդրական կարգավորումները, հանրային իրազեկումը, ծառայությունների դաշտի զարգացումն ու որակի ապահովման և ճանաչման մեխանիզմների գործարկումը** **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 3-րդ գլխի 81-րդ կետի 3-րդ ենթակետի «է», «ը», «թ» և «ժ» պարբերությունների դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է նախանշել Հայաստանում ոլորտի բարելավմանն ուղղված ռազմավարական հիմնական ուղղությունները, պետական հոգածության և երաշխիքների շրջանակը, բոլորի համար հարատև կրթության հավասարապես մատչելի ապահովման հիմնական սկզբունքներն ու դրա կազմակերպման, իրականացման, կառավարման, ֆինանսավորման ու որակի ապահովման մեխանիզմները, որոնք հետագա իրավական կարգավորումների ու գործնական կիրառման հիմք կծառայեն: **1. 1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Ոչ ֆորմալ կրթության ռազմավարական մոտեցումները հիմնականում ուղղված են կարճաժամկետ կրթական ծրագրերի, վերապատրաստման կրթական ծրագրերի, հարատև կրթության և մեծահասակների կրթության բաղադրիչ հանդիսացող ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ձևերի կազմակերպման խնդիրներին, որոնք Հայաստանում գործնականում կարգավորված չեն: Լրացուցիչ և շարունակական կրթության համար լուրջ հիմնախնդիր է համարվում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման կարգի բացակայությունը: Այն հաղթահարելու համար առաջին հերթին անհրաժեշտ է մշակել յուրաքանչյուր որակավորման մասնագետի գնահատման չափանիշները՝ ըստ մասնագիտական կարողության տարրերի և աշխատատեղում իրականացվող մասնագիտական դերի, ինչպես նաև սահմանել ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների ճանաչման մոտեցումներն ու մեխանիզմները: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Անհրաժեշտ է զարգացնել ռազմավարական հետևյալ ուղղությունները՝ Բարեփոխել ոչ ֆորմալ կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը, սահմանել ոչ ֆորմալ կրթությանը առնչվող եզրույթներ՝ միջազգային տերմինաբանությանը համապատասխան, ստեղծել ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքները պետության կողմից ճանաչելու, վկայագրելու հիմքերը, հստակեցնել լրացուցիչ կրթական ծրագրերը կազմակերպելու և իրականացնելու գործընթացային փուլերը, որոնցով նախատեսվում է իրականացնել կարիքների վրա հիմնված, կրթության պետական կառավարման լիազորված

	մարմնի կողմից երաշխավորած ծրագրերով մասնագիտական ուսուցում կամ վերապատրաստում: Ներդնել ուսուցման ազգային ռեեստրը՝ որպես համակարգի շահագործման գործիքակազմ: Բարձրացնել հասարակության իրազեկվածությունը՝ ոչ ֆորմալ կրթական ոլորտի վերաբերյալ: Ստեղծել հնարավորություններ վերապատրաստված և բազմակողմանի զարգացած քաղաքացիական հասարակություն ունենալու համար: **2. Ակնկալվող արդյունքը** Ապահովված է ոչ ֆորմալ կրթության բարձր որակը, յուրաքանչյուրի համար ստեղծված են բազմազան հնարավորություններ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի միջոցով նոր գիտելիքներ ձեռք բերելու, որակավորումը բարձրացնելու և անհատի ուսումնառության անձնական և մասնագիտական կարիքները բավարարելու համար:
	Սփյուռք **Նպատակ 1. Նպաստել հայոց լեզվի տարածմանը, հայկական մշակույթի հանրահռչակմանը օտար երկրներում, ներդնել Սփյուռքում կրթության զարգացմանը նպաստող մեխանիզմներ**
1	**1. 1. Հայաստանի Հանրապետության աջակցությամբ օտար պետություններում հայագիտության զարգացման շարունակականության ապահովում** **1.Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 77-րդ կետի 3-րդ ենթակետի և 83-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է նպաստել միջազգային կրթական տիրույթում Հայաստանի դերի բարձրացմանը, մասնավորապես՝ հայերենի նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելով և հայերենը տարածելով: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Այժմ աշխարհում գործում են հայագետների 4 ասոցիացիաներ, համալսարանական կառույցներ և ուսումնական ծրագրեր: Որոշ համալսարաններում առկա են առանձին դասընթացներ: Շուրջ 100 համալսարանական և հետազոտական կառույցներ գործում են աշխարհի 24 երկրներում: Միաժամանակ, ներկայումս ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը ֆինանսավորում է 13 օտարերկրյա համալսարան՝ 11 երկրում: Մասնավորապես՝ 1) Պրահայի Կարլովի համալսարան, Չեխիայի Հանրապետություն 2) Բուխարեստի համալսարան, Ռումինիա 3) Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարան, Իտալիայի Հանրապետություն 4) Հռոմի Լա՛Սապիենցա համալսարան, Իտալիայի Հանրապետություն 5) Զալցբուրգի համալսարան, Ավստրիայի Հանրապետություն 6) Քենեդու համալսարան, Արգենտինայի Հանրապետություն 7) Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտ, Ռուսաստանի Դաշնություն 8) Կահիրեի համալսարան, Եգիպտոսի Արաբական Հանրապետություն 9) Ուրուգվայի համալսարան, Ուրուգվայի Արևելյան Հանրապետություն 10) Գերմանիայում Մ. Լյութերի կաթոլիկ համալսարանի Հալլեյի «ՄԱՇՏՈՑ» հայագիտական կենտրոն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն

	11) Պոտսդամի Լեփսիուսի ինստիտուտ-թանգարան, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն 12) Մադրիդի Կոմպլուտենս համալսարան, Իսպանիայի Թագավորություն 13) Բռնոյի Մասարիկի համալսարան, Չեխիայի Հանրապետություն: Պետական ծրագրին միանալու ցանկություն ունեցող համալսարանների թիվն աստիճանաբար աճում է, ինչը մի կողմից ապահովում է հիմնական նպատակի իրագործումը, իսկ մյուս կողմից՝ առաջացնում է համալսարաններում միասնական պետական կրթական քաղաքականությունն իրականացնելու անհրաժշետություն: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առկա խնդիրները նախատեսվում է լուծել օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդման, պարբերաբար հայագիտական գիտաժողովների և այլ կրթամշակութային ու գիտական միջոցառումների կազմակերպման, ինչպես նաև նախ՝ հայագիտական վիրտուալ կենտրոնի, այնուհետև՝ հայագիտական միասնական ցանցի ստեղծման միջոցով: **2. Ակնկալվող արդյունքը** Համահայկական վիրտուալ կենտրոնի միջոցով գործընկեր համալսարանների/կազմակերպությունների բազայի հիման վրա կրթագիտական գործունեության իրականացում՝ պետական գիտական հայագիտական առաջնահերթություններին համապատասխան:
	1. 2. Սփյուռքի հայկական կրթօջախների կարողությունների հզորացում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագրի» 73-րդ կետի 8-րդ ենթակետի և 83-րդ կետի 13-րդ ենթակետի դրույթներից: Գործընթացի գլխավոր նպատակն է նպաստել Հայաստանի և սփյուռքի փոխհարաբերությունների ամրապնդմանը կրթության ոլորտում, կրթության որակի բարելավմանը՝ մատուցելով պահանջներին և կարիքներին համապատասխան կրթական ծառայություններ: **1. 1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Սփյուռքում հայկական կրթօջախների և հայեցի կրթության որակը մեծապես կախված է դասավանդող անձնակազմից: Վերջինը բնութագրվում է բազմատարրությամբ: Ելնելով բնակության երկրի պայմաններից և պատմական նախադրյալներից՝ դասավանդումն իրականացնում են տարբեր կրթական աստիճան և տարբեր գիտելիքի պաշար, ինչպես նաև մեթոդական տարբեր պատրաստվածություն ունեցող անձինք: Ուսուցիչների մի մասն օգտվում է տեղում ստեղծված, իսկ մյուս մասը՝ Հայաստանում ստեղծված ուսումնական գրականությունից: Այս իրավիճակում առաջանում է հետևողական պետական քաղաքականության իրականացման անհրաժեշտություն: Քաղաքականությունը պետք է ուղղված լինի մասնագիտական որակների բարձրացմանն ու համահարթեցմանը, ինչպես նաև միասնական կրթական չափորոշիչների ձևավորմանը: Միջոցառումների իրագործումը պետք է ուղեկցվի քաղաքականության իրականացման մեխանիզմների ձևավորմամբ՝ կառավարման որակը բարձրացնելու նպատակով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

	Առկա խնդիրը սահմանված ժամանակահատվածում նախատեսվում է լուծել կրթօջախների տվյալների էլեկտրոնային ինտերակտիվ բազայի ստեղծման և կառավարման, կարիքների քարտեզագրման, ամփոփման, դրանց համապատասխան ուսուցիչների շարունակական առկա և հեռավար վերապատրաստման կազմակերպման, ինչպես նաև ուսուցիչների դասակարգման ու դրա հիման վրա գնահատման/խրախուսման համակարգի ներդրման միջոցով: **2. Ակնկալվող արդյունքը** Սփյուռքի կրթօջախները հնարավորիս ինտեգրված կլինեն Հայաստանի կրթական գործընթացներում, ապահովելու են կրթօջախների առաքելությունից բխող խնդիրների արդյունավետ լուծումը՝ ինքնուրույնաբար և Հայաստանի հետ համագործակցաբար:
	1. 3. Համահայկական դպրոցական և երիտասարդական կրթական միջոցառումների կազմակերպում Հայաստանում **1. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը** Կրթական գործունեությանը ներկայացվող կարևորագույն պահանջներից է դրա համալիր և բազմակողմանի զարգացումը: Պարտադիր բաղադրիչներից են աշակերտի խրախուսումը, գիտելիքների յուրացման վերահսկողությունը: Այդ գործառույթը կատարում են մրցույթները և օլիմպիադաները: Բացի դրանից՝ համահայկական օլիմպիադաները նպաստում են միասնական կրթական չափորոշիչների սահմանմանը և կիրառմանը, Հայաստանի հետ հոգեբանական և հոգևոր կապի հաստատմանն ու տաղանդավոր երեխաների հայտնաբերմանը: Միջոցառման կարևորությունը արտացոլված է Կառավարության գործունեության ծրագրի 77-րդ կետի 8-րդ պարբերության դրույթից: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Համահայկական օլիմպիադան չի անցկացվում 2020 թվականից սկսած: Համավարակով պայմանավորված սահմանափակումների և ֆինանսավորման նվազեցման պատճառով երեխաներ զրկված են եղել ոչ միայն Հայաստան գալուց, այլև ընդհանրապես խրախուսման միջոցառումների մասնակցելուց: Դա իջեցնում է երեխաների մոտիվացիան և խզում է դպրոցների և Հայաստանի միջև կապը: Օլիմպիադաների չանցկացման պայմաններում որևէ կրթական համահայկական միջոցառում փաստացի բացակայում է: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Խնդիրը նախատեսվում է լուծել տարաբնույթ հայմահայկական օլիմպիադաների, փառատոնների, մրցույթների, ստուգատեսների և ամառային դպրոցների անցկացման միջոցով: **2. Ակնկալվող արդյունքը** Սփյուռքի երեխաները և երիտասարդներն ունեն հայեցի կրթություն ստանալու և իրենց գիտելիքները դրսևորելու հնարավորություն, անցկացվող միջոցառումները հասցեական են:
	1. 4. Սփյուռքի կրթօջախների կարիքներին համապատասխան կրթական փաթեթների մշակում և տրամադրում **2. Գործընթացի անհրաժեշտությունը և նպատակը**

	Սույն գործընթացի անհրաժեշտությունը բխում է «ՀՀ կրթության մինչև 2030 թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Սփյուռքում ներկայումս գործում է 500-600 բոլոր տեսակի հայկական կրթօջախ: Կրթօջախների մի մասն ունի պատմություն և ինքնաբավ՝ ելնելով պատմական և այլ նախադրյալներից, սակայն մի մասը ձևավորվել է վերջին 40 տարիների ընթացքում և սերտորեն կապված է Հայաստանի կրթության հետ: Բացի դրանից, գործելով գերազանցապես խոշոր համայնքային կառույցներից դուրս, չունի սեփական բավականաչափ ֆինանսական միջոցներ՝ կրթական գործունեություն իրականացնելու, ինչպես նաև մեթոդական հենքն ապահովելու համար: **1.1. Ներկա վիճակը և առկա խնդիրները** Ամեն տարի ԿԳՄՍՆ դիմում է ավելի քան 100 կրթօջախ դասագրքեր և այլ ուսումնաօժանդակ նյութեր ստանալու համար: Գրքերի պահանջարկը տարաբնույթ է: Այս պատճառով տարեկան մեծանում է թե՛ պահանջվող տեսականին և թե՛ քանակը: Այս պայմաններում առաջանում են երկու տարբեր խնդիրներ: Մի կողմից անհրաժեշտություն է առաջանում հասցեական և սփյուռքի կարիքներին հարմարեցված գրականության ստեղծման, իսկ մյուս կողմից՝ տարբերակելու և առաջնահերթությունները սահմանելու տպագիր գրականության տրամադրման գործում: Տեսականում մի մասը հնարավոր է ապահովել էլեկտրոնային տարբերով: **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Խնդիրը նախատեսվում է լուծել նախ՝ ձեռք բերվող գրականության ծավալները մեծացնելու, հետո՝ նոր գրականություն, էլեկտրոնային նյութեր և պաշարներ ստեղծելու միջոցով: **2. Ակնկալվող արդյունքը** Ակնկալվում է ամեն տարի բավարարել 100-ից ավելի հայտ, ստեղծել էլեկտրոնային պաշար և տարեկան այն հարստացնել 2 նոր նյութով, ինչպես նաև տարեկան մեկ նոր բովանդակության գրականություն մշակել: Նոր մշակված գրականությունը կարող է տարածվել թե՛ էլեկտրոնային և թե՛ տպագիր ձևով՝ ըստ նպատակահարմարության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ